AZG NEW 1.QXD 7/9/2009 11:40 PM Page 1

Ազգ Azg

10 ՅՈՒԼԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 128 (4264)

ISSN: 1829-1651

## Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջնորդները հայտարարություն կընդունեն Ղարաբաղի առնչությամբ

Ըստ Panarmenian.net-ի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջնորդները կարող են Ակվիլայում ընթացող G8 գագաթաժողովում հայտարարություն ընդունել Լեռնային Ղարաբաղի առնչությամբ: Այդ մասին հայտարարել է ՌԴ նախագահի օգնական Արկադի Դվորկովիչը: «Լեռնային Ղարաբաղի առնչությամբ խորհրդատվություններ կան հռչակագրերի ձեւով, ըստ էության համաձայնություն կա: Մենք հույս ունենք, որ նման հայտարարություն կարվի: Սակայն այն, ամենայն հավանականությամբ, կլինի եռյակի՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի հայտարարությունը, այլ ոչ «ութնյակի»: G8 գագաթաժողովներում նման բան գործնականում կիրառվել է», ասել է Դվորկովիչը, հաղորդում է ՌԻԱ Նովոստին:

# Հեղափոխության թեական նախապայմաններ

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Մարդիկ հիշում են, թե ինչպես էր այժմ փոխարտգործնախարար, ավելի վաղ՝ ԱԺԿ լիդեր, իսկ էլ ավելի վաղ՝ Վազգեն Մանուկյանի համախոհ Շավարշ Քոչարյանն անվերջ խոսում Հայաստանում համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունից: Նա ասում էր, որ մարդկանց փոխարինելը դեռ քիչ է, պետք է համակարգը փոխել: Այժմ պաշտոնյա՝ նա այդ մասին վաղուց չի խոսել, հուսանք, որ դրա համար պատճառ է նրա դիվանագիտական ստատուսը, այլապես կարող ենք մտածել, որ կամ նա պաշտոն ստանալով այլեւս համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն չի տեսնում, կամ այդ համակարգային փոփոխությունները, այնուամենայնիվ, սողալով եւ աննկատ են եղել, այնքան աննկատ, որ «խաբարներս» չի եղել: Վերջին միտքը, սակայն, 100 տոկոսանոց ժխտման կարժանանա՛ եւ իշխանական, եւ՛ ընդդիմադիր շրջանակներից հավասարապես, իսկ առաջինին, թեեւ չէինք ուզենա հավատալ, բայց եթե այդպես լիներ, դա կլիներ դասական օրինակ այն իրողության, որ մեր՝ անգամ ամենագաղափարական համարվող ընդդիմադիրներին բոլոր ժամանակներում ոչ թե Հայաստանում հեղափոխությունն ու փոփոխություններն են հետաքրքրում, այլ՝ փոքր հաշվով սեփական կարիերան, մեծ հաշվով՝ իր կողմնակիցների (իր թայֆայի) կարիերան, հայերեն ասած՝ իշխանության գալը: Իսկ համակարգային փոփոխությունների բախտը դեռ երկար չի բերի Հայաստանում, քանի որ մտածողություն փոխելու համար դեռ սերունդ պետք է փոխվի. օրինակ՝ Ալիկ Արզումանյանի եւ




Գագիկ Ջհանգիրյանի ժամանակը մեր պետության մեջ նույնքան հարուստ է եղել թայֆայաբազությամբ, յուրայիններին կերակրամանի մոտ պահելու «հեղափոխական» թպրտոցով, որքան հիմա, եւ այդ նույն մարդիկ իշխանության վերադառնալով հազիվ թե իրենց մեջ նստած թայֆայաբազին հաղթեն: Իսկ համակարգ փոխելու համար կրթություն, դաստիարակություն, նոր ձեւով ապրելու սովորույթ է պետք, որ միանգամից չի գալիս, այլ աստիճանաբար: Ոչ թե մի օր արթնանում ու տեսնում ես, որ համակարգային փոփոխություն է եղել՝ ինչպես ձյունն է գալիս մի գիշերում, այլ քայլ-քայլ, ինստիտուտների կայացմամբ, օրենքները դեմոկրատացնելով եւ ամենակարեւորը՝ օրենքները կիրառելու կամքը սանտիմ առ սանտիմ ամրացնելով են պետությունները գնում համակարգային փոփոխությունների: Մի օրինակով ասեմ, որ հասկանալի լինի. կրթության համակարգում, ըստ սիրողական հաշվումների, ընդունելության քննությունների ժամանակ 25-30 մլն դոլարի կաշառք է պտտվում: Այ սա բացասական իմաստով համակարգված մի բուրգ է, որի թելերն աստիճանաբար կենտրոնանում են դեպի վեր, եւ եթե ամենավերեւից մեկն անսպասելիորեն կամք դրսեւորի եւ թելերից մեկը բաց թողնի՝ բուրգը կփլվի, իր տակ թողնելով թացն ու չորը եւ շղթայական ռեակցիա առաջացնելով: Կամ էլ նվազագույնը, այդ կամք դրսեւորողը դուրս կմնա համակարգից, իսկ բուրգը կշարունակի իր գոյությունը՝ նրան շրջանցելով:

*Տես էջ 3*

*ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ*

## Այց ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն

**Օմբուդսմենի գրասենյակից հաղորդում են, որ արձագանքելով մամուլում հրապարակված տեղեկություններին, որ ձերբակալված Տիգրան Առաքելյանը հացադուլ է հայտարարել, մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ արագ արձագանքման խումբը այցելել է ոստիկանություն՝ ձերբակալված Տիգրան Առաքելյանի հետ հանդիպման նպատակով: Վերջինս հայտնել է, որ հուլիսի 6-ին, ժամը 10-ից հայտարարել է հացադուլ, քանի որ նախաքննական մարմինը բացարձակ անհիմն կերպով իրեն կասկածում է հանցագործության կատարման մեջ: Հայտնել է նաեւ, որ 2009-ի հուլիսի յոթի երեկոյան իր ինքնազգացողությունը վատացել է, իրեն այցելել է բուժակը, որից հետո հրավիրվել է շտապ օգնության անձնակազմ: Պաշտպանի ներկայացուցիչները պարզելով, որ այցելության պահին Տիգրան Առաքելյանին դեռեւս մեղադրանք առաջադրված չէ եւ նա գտնվում է կասկածյալի կարգավիճակում, բացատրել են նրա՝ որպես կասկածյալի եւ ձերբակալված անձի օրենքով սահմանված իրավունքները՝ այդ թվում նաեւ պաշտպան ունենալու իրավունքը: Տիգրան Առաքելյանը հայտնել է, որ ձերբակալման պահից ունի պաշտպան եւ գոհ է նրա ծառայություններից:**

## Ընդհանուր պատմության լրացուցիչ քննությունից 20 միավոր է ստացել միայն մեկ հոգի

Համալսարանությունում հուլիսի 6-ին կայացած ընդհանուր պատմություն առարկայի լրացուցիչ քննությունից 16 դիմորդից 20 միավոր է ստացել միայն մեկ հոգի: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին Գնահատման եւ թեստավորման կենտրոնից, այս առարկայից 3 հոգի ստացել է 13,5-17,25 միավոր, 8 հոգի՝ 7,5-13,25 միավոր: Անբավարարները թվով 4-ն են, իսկ միջին միավորը՝ 10,1-ն է: Աշխարհագրություն առարկայի լրացուցիչ քննությունից դրական միավորի շեմը չի հաղթահարել միայն մեկ դիմորդ, իսկ ամենաբարձր միավորը եղել է 18,75-ը, որը հավաքել է կրկին մեկ հոգի: Այս քննությանը մասնակցել է 5 դիմորդ: Միջին միավորը 11,4-ն է: Նույն օրը կենսաբանության լրացուցիչ քննությանը մասնակցել է 42 հոգի: Նրանցից 4-ը ստացել է 17,5-20 միավոր, սակայն ուղիղ 20 միավոր չի գրանցվել: Միջին միավորը 9,9 է: Անբավարար է գնահատվել 14 հոգու քննական աշխատանք:

## «Ազգ»-ի վաղվա կինոհավելվածում

**6-րդ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի բացման առիթով մեր թերթի վաղվա համարում լույս կտեսնի փառատոնային հավելված՝ հագեցած փառատոնի տնօրեն, կինոբեմադրիչ Հարություն Խաչատրյանի հետ հարցազրույցով, փառատոնի բացման ֆիլմի՝ ֆրանսիացի ռեժիսոր Լորեն Տյուելի «Մերձավոր շրջապատի» մասին թարգմանական նյութով, պատվավոր հյուրերի հակիրճ բնութագրմամբ, փառատոնի մրցութային ծրագրում ընդգրկված խաղարկային ֆիլմերի ներկայացմամբ, ինչպես նաեւ բոլոր ֆիլմերի ցուցադրման ծրագրով:**

## Նախատեսվում է ավելացնել մամուլի կրպակների թիվը

**Համապետության լրատվական թերթերի տարածման գործում գերիշխող դիրք ունեցող «Պրեսս Ստենդը» նախատեսում է առաջիկայում մամուլի կրպակների թիվը հասցնել մինչեւ 500-ի: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց ընկերության գործադիր տնօրեն __Արմեն Գաբրիելյանը__, ներկայումս հանրապետության տարածքում ընկերության ենթակայության տակ գործում են 210 մամուլի կրպակներ, որոնցից 130-ը՝ Երեւանում: «Պրեսս Ստենդը» մամուլի տարածման գործունեությունը ստանձնել է 2007-ի հոկտեմբերին, եւ մինչ այսօր նախկինում գործող «Հայմամուլ»-ից ստացված կրպակները փոխարինվել են նորերով: Ա. Գաբրիելյանի խոսքով, նոր կրպակներն ունեն բավարար պայմաններ, որակական փոփոխություններ են կատարվել մամուլը լիարժեք ներկայացնելու համար: Դրանք 3-4 անգամ ավելի մեծ տարածք ունեն, քան նախկինները: Կրպակներ են տեղադրվել Քաջարանում, նախատեսվում է տեղադրել Գեղարքունիքում, Կոտայքում, Տավուշում եւ Արագածոտնում, նաեւ ավելացնել մետրոյի կայարաններում գործողների թիվը: Ա. Գաբրիելյանը հավաստիացրեց, որ թերթերն առավոտյան ժամը 9-ին ոչ միայն Երեւանում, այլեւ մարզերում արդեն կրպակներում են լինում:**

## «Մոսկովյան հանդիպումը ցույց կտա՝ առաջխաղացման հնարավորություն կլինի՞»

Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը** հայտարարել է, թե մոսկովյան հանդիպումը ցույց կտա՝ առաջխաղացման հնարավորություն կլինի՞ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի սահմանումը շատ կարեւոր ու լուրջ հարց է: Ղարաբաղը Ադրբեջանի բաղկացուցիչ մասն է, որի իրավական կարգավիճակը պետք է սահմանի Ադրբեջանը: Նորմալ չէ, որ Ադրբեջանի բաղկացուցիչ մասն առանց կարգավիճակի է», ասել է արտգործնախարարը: «Հարցն այն է, թե երբ կսահմանվի այդ կարգավիճակը», նշել է Մամեդյարովը: Ըստ նրա՝ «հարկադիր վերաբնակները պետք է վերադառնան Ղարաբաղ, այլապես մեզ համար դժվար կլինի սահմանել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը»:

# Թյուրքական աշխարհը միայն Թուրքիան եւ Ադրբեջանը չեն

Հայաստանում կարող է եւ պետք է գործի միջազգային գիտական կենտրոն, որը միմյանց կկապի քրիստոնեական եւ իսլամական աշխարհը: Այսօր մեկնարկած «Թյուրքական աշխարհ, Կովկաս եւ Իրան. քաղաքակրթությունների փոխներգործության խաչմերուկ» խորագրով գիտաժողովի կազմակերպիչները վստահ են, որ գաղափարն իրագործելի է եւ ավելին՝ ուշացած: «Թյուրքական աշխարհ ասելով մենք հասկանում ենք ոչ միայն Թուրքիան եւ Ադրբեջանը: Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Իրանը, ինչու ոչ՝ Թաթարստանը ներկայացնում են թյուրքական աշխարհը, որոնց հետ մենք կարող ենք կապեր հաստատել եւ դառնալ կապող օղակ: Մեր իշխանությունները շարունակ խոսում են հայ ժողովրդի մտավոր պոտենցիալի մասին, սա հենց այն դեպքն է, երբ հարկավոր է օգտագործել այդ պոտենցիալը: Բարեհաջող է նաեւ մեր երկրի աշխարհագրական դիրքը», «Հայացք» ակումբում լրագրողների հետ հանդիպման ընթացքում նշեց ԵՊՀ իրանագիտության ամբիոնի




վարիչ **Գառնիկ Ասատրյանը**:

Գիտաժողովը, որը կանցկացվի մինչեւ հուլիսի 12-ը, իր շուրջն է համախմբել 21 երկրի 100 մասնակցի: Երկու մշակույթների միջեւ կապող օղակ դառնալու ճանապարհին գիտաժողովն էական քայլ է, կարծում է «Պարթեւ» հայ-թուրքմենական համագործակցության կենտրոնի ղեկավար **Միհր Գյուլումյանը**: «Անգամ մեր գործընկերներից շատերը թերահավատորեն էին վերաբերվում այդ գաղափարին՝ ասելով, որ ի՞նչ է, ընկերությո՞ւն եք ուզում անել թուրքերի հետ: Սակայն թյուրքական աշխարհը չի սկսվում եւ ավարտվում միայն Թուրքիայով եւ Ադրբեջանով: Ժամանակ պահանջվեց հենց մեր գործընկերների շրջանում այդ կարծրատիպը կոտրելու համար: Թյուրքական աշխարհի հետ համագործակցությամբ մենք կարող ենք նախապայմաններ ստեղծել նաեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ համագործակցության համար», ասաց Միհր Գյուլումյանը:

Ադրբեջանի գիտնականների հետ համագործակցության փորձ եղել է, սակայն գիտաժողովին նրանք չեն մասնակցի: Փոխարենը գիտնականներ են այցելել Թուրքիայից, Կենտրոնական Ասիայից, Եվրոպայից եւ ԱՄՆ-ից: Գիտնականների աշխատանքի արդյունքները կամփոփվեն եւ կհրապարակվեն մի քանի լեզուներով: Գիտաժողովը կազմակերպել են «Իրան եւ Կովկաս» պարբերականը, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը, «Սոցիոմետր» կենտրոնը, ARMACAD-ը, Իրանալեզու հանրույթների ուսումնասիրության միջազգային ընկերակցությունը եւ «Պարթեւ» հայ-թուրքմենական համագործակցության կենտրոնը: Կազմակերպիչները նախատեսվում են նմանատիպ գիտաժողովներ անցկացնել 2 տարին մեկ անգամ:

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Ստատուս քվոյի պահպանումը բխում է ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահերից

Երեկ Կովկասի ինստիտուտը, գերմանական «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամի օժանդակությամբ, Ստեփանակերտում կազմակերպել էր կոնֆերանս «Ղարաբաղյան հակամարտություն. նոր իրողություններ» թեմայով:

Ինչպես միջոցառման սկզբում նշեց նախաձեռնության հեղինակ, Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանը, կոնֆերանսը Ստեփանակերտում անցկացնելը նպատակ ուներ ղարաբաղյան խնդրի քննարկումները ոչ թե արտերկրում, այլ հենց տեղում անցկացնել: Իսկ «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամի Հարավային Կովկասի բյուրոյի ղեկավար **Իրիս Քեմպեն** նշեց, որ իրենց համար կարեւոր են տեղական փորձագետների տեսակետները հակամարտության վերաբերյալ:

Զեկուցումները տարաբնույթ էին: Ռազմավարական եւ ազգային ուսումնասիրությունների հայկական կենտրոնի տնօրեն **Ռիչարդ Կիրակոսյանի** զեկուցման թեման, օրինակ, ղարաբաղյան հակամարտությունում փոփոխվող իրողությունների ու արտաքին գործոնների ներգրավման մասին էր: Ըստ բանախոսի, չպիտի թույլ տալ, որ քաղաքական խնդիրները ռազմական լուծում ունենան: Այս համատեքստում նա շեշտեց Ադրբեջանի՝ տարածաշրջանում ռազմական գործոն դառնալու մղումը: Սակայն, նշեց Ռ. Կիրակոսյանը, հարեւան երկրում անհնար է ռազմական ոլորտում արդյունավետ բարեփոխումներ իրականացնել, քանի դեռ այդ երկրի ռազմական գերատեսչության ղեկավարը շարունակում է պաշտոնավարել: Որպես ամերիկացի իր տեսակետն արտահայտելով՝ բանախոսն ասաց, որ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի շահերից է բխում ղարաբաղյան կոնֆլիկտում ստատուս քվոյի պահպանումը: Անդրադառնալով Եվրոմիության Արեւելյան գործընկերության ծրագրին, նա նշեց, որ այդ ծրագիրը դատապարտված է ձախողման, քանի որ ստույգ պարագայում Ռուսաստանը թույլ չի տա Հայաստանին ավելի ծավալվել գործընկերության մեջ:

Ռիչարդ Կիրակոսյանի այս տեսակետը չէր ընդունում Իրիս Քեմպեն: «Հարավային Կովկասի եվրոինտեգրման նոր հեռանկարները եւ ազդեցությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում» թեմայով նրա զեկուցումը հիմնականում նվիրված էր ԵՄ աճող դերին: Հարավային Կովկասում հակամարտությունների լուծման լավագույն տարբերակը, ըստ Ի. Քեմպեի, Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի անդամակցությունն է Եվրոմիությանը: Գաղափարը խելացնոր է թվում, սակայն չպիտի բացառել դրա հնարավորությունը, գտնում է «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամի Հարավային Կովկասի բյուրոյի ղեկավարը:

Թբիլիսիի պետական համալսարանի դասախոս, «Ռեզոնանս» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ **Մալխաս Գագուան**, ելնելով Վրաստանի փորձից, համեմատական վերլուծություններ կատարեց Հարավային Կովկասի հակամարտությունների առնչությամբ, իսկ ԼՂ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով հասարակական խորհրդի ղեկավար **Մասիս Մայիլյանն** ու ստեփանակերտցի փորձագետ **Հրաչյա Արզումանյանն** անդրադարձան ղարաբաղյան հիմնախնդրի հեռանկարներին: Մասիս Մայիլյանը, մասնավորապես, փորձագիտական գնահատականներ ներկայացրեց Ղարաբաղում քաղաքացիական հասարակության մոտեցումների շուրջը:

Հնչեցին նաեւ զեկուցումներ՝ նվիրված տարածաշրջանային անվտանգության ռազմական ռիսկերին ու էթնոքաղաքական զարգացումներին:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# «ԼՂՀ-ն կարտահայտի իր կարծիքը, երբ լինի բանակցային կողմ»

Երեկ Այգեստան գյուղում տեղի ունեցավ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի բացման պաշտոնական արարողությունը: Ընդգրկված են 600 11-րդ դասարանցիներ, որոնք մեկ ամսվա ընթացքում 10-օրյա հերթափոխով ծանոթանալու են զինվորական կյանքին: Առաջին տասնօրյակում ռազմական այբուբենը կսերտեն Հադրութի, Մարտակերտի ավելի քան 100 պատանիներ: Միջոցառման մասնակից ԼՂՀ պաշտպանության նախարար **Մովսես Հակոբյանը** լրագրողների հետ փոքրիկ զրույցի ընթացքում անդրադարձավ մի շարք կարեւորագույն հարցերի: «Թշնամի երկրի հայտարարությունները նորմալ երեւույթ են: Մեր բանակն ունի խնդիրներ, փորձում ենք դրանք լուծել: Ադրբեջանի այդ հայտարարությունները որեւէ գործողության գնալու հիմք չպետք է դառնան»: Անդրադառնալով ադրբեջանական դիպուկահարների գործողություններին, Հակոբյանը նկատում է, որ Ադրբեջանը միշտ ցանկացել է շփման գծում թելադրողի կարգավիճակում հանդես գալ:

«Մի քանի անգամ ԵԱՀԿ մոնիտորինգները խախտվել են դիպուկահարների կրակոցների պատճառով: Հայկական կողմը պատրաստ է հրաժարվել դիպուկահարներից: Այդ կապակցությամբ պատրաստել էինք համաձայնագիր, որը պետք է կնքվեր Ադրբեջանի եւ ԼՂՀ պաշտպանության նախարարությունների միջեւ, սակայն ադրբեջանական կողմը հրաժարվեց ստորագրելուց»:

«ԼՂՀ բանակն այն դիրքերում է, որ կպաշտպանի արցախցու կյանքն ու ազատությունը»: Հակոբյանն այսպես բնորոշեց ԼՂՀ բանակի մարտունակությունը. «Հայկական բանակը Ադրբեջանին պարտադրում է խաղաղություն: Արդեն 15 տարի Ադրբեջանը հայտարարություններ է կատարում, սակայն երբեւէ դրանք գործի չեն վերածվում: Չենք թողնելու հակառակորդին առաջին գծում ունենալ գերակայություն թե՛ ռազմական, թե՛ հոգեբանական առումով: Ճնշել ենք ու շարունակելու ենք ճնշել», նկատեց նախարարը:

Անդրադառնալով ԼՂՀ-ի բանակցային կողմ դառնալու կարեւորությանը՝ Մովսես Հակոբյանը ակնհայտ է համարում ԼՂՀ-ի երրորդ կողմ ներկայանալը: «Խոսքը վերաբերում է մեր ժողովրդին, հետեւաբար ԼՂՀ-ն պետք է որոշի բանակցությունների ժամն ու փուլը: Բանակցությունները, որտեղ չկա ԼՂՀ-ն, հեռու է լիարժեք խաղաղությունից», ասաց Հակոբյանը: «Այս հարցում Հայաստանի իշխանությունների հետ հակասություններ կա՞ն» հարցին Հակոբյանը պատասխանեց, որ ԼՂՀ-ն բանակցային կողմ չէ, հետեւաբար հակասություններ չեն կարող լինել. «ՀՀ-ն արտահայտում է իր կարծիքը, ԼՂՀ-ն կարտահայտի իր կարծիքը, երբ լինի բանակցային կողմը», եզրափակեց Մովսես Հակոբյանը:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստեփանակերտ-Երեւան**

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

# Ռալֆ Յիրիկյանը՝ «Տարվա մարդ»



Համահայկական ոսկրածուծի պատվաստման հիմնարկությունը (ՀՈՊՀ) իր հուլիսի 12-ին «Գլենդեյլ Հիլթոն» հյուրանոցում կայանալիք տարեկան գալա-ընդունելության ժամանակ որպես «Տարվա մարդ» պատվելու է «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Երեկոյի ընթացքում հատուկ պարգեւների են արժանանալու նաեւ ՀՈՊՀ-ին իրենց անվերապահ ծառայություններն ու աջակցությունները ցուցաբերած մի շարք կամավոր աշխատակիցներ, որոնց թվում են Սթիվ Արթինյանը, Սյուզան Ավագյանը եւ Թալին Խաչատուրյանը:

«Ռալֆ Յիրիկյանն այն անձնավորությունն է, որ մարմնավորում է կորպորատիվ հասարակական պատասխանատվության հասկացությունը: Իր աննկուն նվիրվածությամբ նա ապացուցել է, որ վարձահատույց լինելը կարող է անքակտելի մասը լինել կորպորատիվ որեւէ հաստատության, որի օգնությամբ մեծապես հնարավոր է փոխել մարդկանց կյանքը», նշել է այս առթիվ ՀՈՊՀ-ի տնօրենների խորհրդի նախագահ դոկտ. **Ֆրիդա Ջորդանը:**

**Հ. Ծ.**

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՐԴՈՒՄԸ

# Հայոց բանակում ծառայելը պատիվ է ամեն հայի համար

**17-ամյա հայոց բանակը օրեցօր համալրվում է որակյալ ու մասնագետ սպայական կազմով: Եվ բանակում ծառայելը ամեն մի հայի սուրբ պարտքն է: Գարնանային զորակոչը մոտենում է ավարտին, հայոց բանակի զորամասերում ավարտվում են նորակոչիկների երդման արարողությունները: «Ազգը» ներկա գտնվեց Կոտայքի մարզի Լուսակերտի զորամասում ընթացող վերջին երդման արարողությանը: Գեղեցիկ, ծառ ու ծաղկով շրջապատված զորամասի կենտրոնական հրապարակում զորամասի մի քանի հարյուր նորակոչիկների երդման կարգն ընդունեց զորամասի հրամանատար, գնդապետ Արմեն Հարությունյանն ու մաղթեց բարի ծառայություն, նշելով. «Դուք եք մեր հայոց բանակի դեմքը եւ այս պատմական օրը մշտապես կմնա ձեր հիշողության մեջ: Փառք ու պատվով ծառայեք հանուն հայրենիքի վաղվա օրվա»:**



**Իսկ երբ հրամանատարն ազդարարեց տոնական քայլերթը՝ ներկաները ծափերով ու բացականչություններով դիմավորեցին խրոխտ զինվորներին, որոնք նվագախմբի հնչյունների տակ եւ գնդի երգը շուրթերին երեք պտույտ արեցին հրապարակում:**

**Երբ զրուցում էինք զորակոչիկ Դավիթ Սարգսյանի հետ, նա ասաց. «Ամեն հայ տղա պարտավոր է ծառայել հայոց բանակում: Իսկ դժվարություններ, իհարկե, սկզբնական շրջանում կլինեն մինչեւ հարմարվենք: Բայց էլ ինչ տղամարդ, որ դժվարություններ չհաղթահարի: Թող միշտ խաղաղություն լինի ու հայն էլ հպարտանա իր բանակով, իր զինվորով, որոնց տղամարդ են կրթում ու դաստիարակում մեր հայոց բանակում»:**

**«Ազգը» շնորհավորելով գնդապետ Հարությունյանին օրվա առիթով, խնդրեց տեղեկացնել, թե հիմնականում ինչ խնդիրներ են ծագում նորակոչիկների հետ: «Առաջին մի քանի օրը եթե առողջական խնդիրներ լինում են, մենք հրաշալի բուժկետ ունենք, որտեղ նրանք անհրաժեշտ օգնություն են ստանում: Հիմնականում մինչեւ բանակային կյանքին հարմարվելը, նոր ընկերական շրջապատ ստեղծելը ժամանակ է պահանջում ու լուրջ խնդիրներ չեն առաջանում»:**

**23 տարվա զինվորական կյանքով ապրող գնդապետը երկու տարի է, ինչ ստանձնել է հրամանատարությունը եւ գոհ է թե՛ սպայական բարձր պատրաստվածություն ունեցող կազմից եւ թե՛ զինվորներից:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Վկայություններ հանուն մարտական ընկերոջ

**Երեկ «Ուրբաթ» մամուլի ակումբում Հայաստանի հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանի հրավիրած ասուլիսի բուն նպատակը հրապարակային հայտարարության համար կեղծ մասնության մեղադրանքով 3,5 տարի ազատազրկված Սարգիս Հացպանյանի՝ արցախյան գոյամարտին մասնակցած լինելն ապացուցելն էր: Դրանից էլ բխելու էր Ս. Հացպանյանին ներում շնորհելը, քանի որ վերջերս հայտարարված համաներումը տարածվում է 3-5 տարի ազատազրկված այն քաղաքացիների վրա, ովքեր Հայրենական մեծ պատերազմի կամ Արցախյան գոյամարտի մասնակիցներ են, նախկինում դատապարտված չեն կամ թեթեւ հանցանքներ են գործել: Իսկ քանի որ Իշխանյանի ու Հացպանյանի գործով զբաղվող փաստաբաններին ԼՂՀ ՊԲ-ից, գոյություն չունենալու պատճառաբանությամբ, չէր հաջողվել ստանալ Արցախյան պատերազմին մասնակից լինելն ապացուցող փաստաթուղթը, Իշխանյանը ընտրել էր ապացույցի այս տարբերակը:**

**Ըստ Իշխանյանի՝ ՊԲ արխիվում գրանցված չլինելը տարբեր պատճառներ կարող է ունենալ՝ սկսած անփութությունից, վերջացրած նրանով, որ Հացպանյանը Ֆրանսիայի քաղաքացի է եւ այդ հանգամանքը Ադրբեջանի համար կարող էր տարբեր շահարկումների առիթ լինել:**

**Ասուլիսին ներկայացվեցին լուսանկարներ, տեսանյութեր, տարբեր փաստաթղթեր, ստորագրահավաքներ, ինչպես նաեւ ներկա էին արցախյան պատերազմի մասնակիցներ, որոնք հաստատում էին Հացպանյանի մասնակցությունը պատերազմին: Պատերազմին մասնակցած ներկաներից մեկն ասաց. «Արտասահմանցի հայրենակիցների մասնակցությունն Արցախյան պատերազմին, ցավոք տարի, մոտ 2 տասնյակի է հասնում ընդամենը, որից մեկն էլ Ս. Հացպանյանն է»:**

**Իշխանյանը, անդրադառնալով ծանրացնող ու մեղմացնող հանգամանքներին, ասաց որ սա միջին ծանրության հանցանք է, ծանրացնող հանգամանքներ չկան, իսկ մեղմացնողներ կան: Նշելով, որ Հացպանյանը ունի 2 անչափահաս զավակ, ծանր հիվանդ հայր՝ նա հույս հայտնեց, որ ներկայումս Վճռաբեկ դատարանում գտնվող գործը ասուլիսից հետո այլ ընթացք կունենա:**

**ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Նախարարությունների եւ դրանց աշխատակիցների գնահատման նոր կարգ

## *Պետական ծառայողը պարգեւավճար կստանա կամ կազատվի աշխատանքից ըստ կատարած աշխատանքի արդյունավետության*

Կառավարությունն ավարտել է 16 նախարարությունների եւ տեսչական եկամուտների կոմիտեի կիսամյակային հաշվետվությունների ընդունումը, որոնք, ինչպես կառավարության նիստի ժամանակ հայտնեց վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, այս անգամ կազմվել են նոր մեթոդաբանությամբ: Այդ մեթոդաբանության մանրամասները լրագրողներին ներկայացրեց կառավարության աշխատակազմի ղեկավար **Դավիթ Սարգսյանը**:



Ըստ կառավարության աշխատակազմի ղեկավարի, նոր մեթոդաբանությունը մշակվում է արդեն մեկ տարի, որի անհրաժեշտությունն այն է, որ նախարարությունների հաշվետվություններն ընդունելիս հնարավոր չի լինում գնահատել այդ մարմինների աշխատանքի արդյունավետությունը: Փորձնական այս կարգով նախարարությունների յուրաքանչյուր վարչության պետի, բաժնի պետի, աշխատակցի մակարդակով մշակվել է տարեկան ծրագիր, որտեղ նշվում է, թե ինչ ժամկետում նրանցից յուրաքանչյուրը պետք է կատարի համապատասխան միջոցառումները, ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ դրա համար: Գնահատականը տրվում է կիսամյակային եւ տարեկան կտրվածքով: Գնահատման հիմքում դրվում է երկու չափորոշիչ՝ ժամկետ եւ որակ: Ժամկետի առումով բարդություն չկա: Պետք է ստուգվի՝ կատարվե՞լ է այդ ժամկետում աշխատանքը, թե՞ ոչ: Մինչդեռ այլ է խնդիրը որակի առումով: Ինչպես հայտնեց Դավիթ Սարգսյանը, պետք է ստեղծվեն չափորոշիչներ եւ հստակ ձեւակերպվեն խնդիրները: Գնահատման հիման վրա էլ որոշվելու է տվյալ աշխատակցի վարձատրությունը:

Միաժամանակ, նախարարությունների աշխատանքի գնահատման նոր մեթոդաբանությամբ երեւում է, թե ո՞ր ստորաբաժանումներն են գերբեռնված աշխատում, որը՝ թերբեռնված: Կամ՝ ո՞ր ֆունկցիաներն են անհրաժեշտ իրականացնել եւ որոնց կարիքը չկա:

Խոսելով գնահատման որոշ արդյունքների մասին, կառավարության աշխատակազմի ղեկավարը հայտնեց, որ հանդիպել են դեպքեր, երբ աշխատակիցը հաջողությամբ անցել է քաղծառայության ատեստավորումը, բայց աշխատանքի արդյունավետության կատարման ցածր գնահատական է ստացել եւ ընդհակառակը: Այսինքն, դեռեւս կան ճշտման կարիք ունեցող խնդիրներ: Այդուհանդերձ, աշխատակցի գնահատականը նրա ղեկավարները տալու են ոչ թե զգացմունքային մոտեցումներով, այլ ըստ կոնկրետ արդյունքների: Սահմանվելու են նաեւ վարքագծային թեստեր՝ պարզելու աշխատակցին գնահատելիս ղեկավարի մոտիվացիան:

Դավիթ Սարգսյանը տեղեկացրեց, որ նախարարությունների կատարած կիսամյակային աշխատանքների միջին գնահատականը եղել է 90 տոկոս: Եղել են նախարարություններ, որոնք ունեցել են 90 տոկոսից ավելի ցուցանիշ, եւ այնպիսիք, որոնք ունեցել են 75-80 տոկոս ցուցանիշ:

«**Ազգի**» հարցն այն էր, թե ի՞նչ է լինելու այն աշխատակցի հետ, որը քաղծառայության ատեստավորումը հաջողությամբ անցել է, բայց ցույց է տվել կատարած աշխատանքի ցածր արդյունավետություն: Պատասխանելով այս հարցին, կառավարության աշխատակազմի ղեկավարը հիշեցրեց, որ այս ծրագիրը փորձնական է եւ վերջնականում նախատեսվում են այս հարցի կատարելագործմամբ հետեւյալ մոտեցումները սահմանել՝ 85 տոկոս եւ ավելի կատարողական ցույց տված աշխատակիցը պարգեւատրման իրավունք կստանա, 80-85 տոկոս ցուցանիշ ցույց տված աշխատակիցը չի պարգեւատրվի եւ կշարունակի աշխատել նույն աշխատավարձով, իսկ 80 տոկոսից ցածր արդյունավետությամբ աշխատողների համար հարց է բարձրացվելու տեղափոխել ավելի ցածր պաշտոնի կամ ազատել աշխատանքից:

Կառավարության նիստի ժամանակ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ այս համակարգը տեսչական գերատեսչություններում ներդրվելու է երեք տարվա ընթացքում եւ ապագայում բյուջեի պլանավորումը ըստ նախարարությունների հիմնված է լինելու այս մեթոդաբանության վրա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

### Բյուջետային երաշխիք 5-րդ կառուցապատող ընկերությանը

Կառավարության երեկվա նիստում որոշվեց բյուջետային երաշխիք տրամադրել «Վահե Հարությունյան» ընկերությանը՝ Երեւանի Կենտրոն վարչական տարածքում, Հանրապետության 51-53 հասցեում կառուցվող շինության կառուցապատումն ավարտին հասցնելու համար: Հիշեցնենք, որ այդպիսի երաշխիքներ տրամադրվել էին եւս 4 կառուցապատողների: Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ բյուջետային երաշխիքներ տրամադրելու համար սահմանված են բավականին խիստ պահանջներ: Դրանք հասկացնելու դեպքում կառավարությունը վճարում է գրավադրվող գույքի 30 տոկոսի չափով, իսկ գումարները տրամադրվում են միայն պատրաստվածության բավականին բարձր աստիճան ունեցող կառույցների շինարարությունն ավարտին հասցնելու համար:

Ա. Ս.

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ

# Բանտից նոր ազատված Ալիկ Արզումանյանը հանդիպեց լրագրողներին

Ալիկ Արզումանյանը, որ նոր է ազատվել բանտից, երեկ «Իրավունք դե ֆակտո» ակումբի հյուրն էր եւ ազատության մեջ հայտնվելուց հետո առաջին անգամ էր հանդիպում լրագրողներին եւ իր տեսակետն էր ներկայացնում Հայաստանի վերջին մեկուկես տարվա իրավիճակի մասին. «Փետրվարի 19-ին Հայաստանում եղավ քաղաքական ճգնաժամ, որի լուծումը իշխանությունները տեսան մարտի 1-ի սպանդի իրականացմամբ, որից հետո Հայաստանը հայտնվել է քաղաքակրթական ճգնաժամի մեջ»:

Նրա խոսքով, չի փակվել նաեւ մարտի 1-ի էջը: Ալիկ Արզումանյանն ասում է, որ մարտի 1-ի էջը կփակվի միայն այն ժամանակ, երբ բացահայտվեն եւ պատասխանատվություն կրեն այդ օրը կատարված սպանդի իրական մեղավորները, հրաման տվողներն ու կատարողները:

Անդրադառնալով Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստ, երիտասարդ Տիգրան Առաքելյանի ձերբակալությանը՝ Ալիկ Արզումանյանը նշեց. «Ինչ է կատարվել: Երիտասարդները իրազեկման իրենց օրինական իրավունքն իրականացնելիս, հարձակվել է խուլիգանների մի խումբ, որոնք ոչ ներկայացել են որպես ոստիկան, ոչ ներկայացել են որպես իրավապահ մարմին: Ծեծել են երիտասարդներին, ընդ որում զենք են հանել, զենքով խփել են երիտասարդներից մեկի գլխին, այդ խուլիգանությունն իրականացնելուց հետո այդ նույն երիտասարդներին բերման են ենթարկել եւ քրեական գործ են հարուցել ինչ-որ զավեշտալի, անհեթեթ հոդվածով»:

Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի մասին խոսելիս Հայաստանի նախկին արտգործնախարարը փաստեց, որ միջազգային մամուլը հեղեղված է Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների մտահոգիչ հայտարարություններով, իսկ Հայաստանից չկա համարժեք պատասխան. «Հայաստանյան կողմը լռում է, միջնորդներն ասում են ընդհանուր ֆրազներ՝ «հնարավորության պատուհան», «հերթական ոսկե հնարավորություն» եւ այլն: Ադրբեջանը տալիս է իր պատկերացրած լուծման եղանակը, հայկական կողմը ձայն չի հանում, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ տապավորություն է, որ խոսքը Կիպրոսի Հանրապետության մասին է: Մտահոգիչ է նաեւ ինչ-ինչ պատճառաբանությամբ Լեռնային Ղարաբաղ չայցելելը նախագահողների կողմից: Վերջին 17 տարիների ընթացքում, ինչ գործում է Մինսկի խումբը, հա, 15, սա միակ տարին է, որ ընդամենը 6 ամիս է անցել եւ 3 անգամ եղանակը բարենպաստ չի եղել Ղարաբաղ գնալու համար: Տարօրինակ զուգադիպություն է, որ 15 տարի այդքան վատ եղանակ չի եղել»:

Նրա խոսքով, կա Հայաստանին կարգավորում պարտադրելու ծրագիր, որը եթե ինչ-ինչ պատճառով չստացվի, կարող է գործի դրվել ռազմական ճանապարհով կարգավորման տարբերակը, ինչն ունի միջազգային շատ այլ նախադեպեր, երբ պատերազմով են խաղաղություն պարտադրում: Այդ մասին Ալիկ Արզումանյանը խոսել է ի պատասխան հարցի, թե ցուցե չարժե ուշադրություն դարձնել ադրբեջանական հայտարարություններին:

Լրագրողները Արզումանյանին խնդրեցին գնահատել ԵԽԽՎ-ում Զարուհի Փոստանջյանի գործունեության հայտնի միջադեպն ու դրան Հայաստանում տված «դավաճանություն» որակումը:

Ալիկ Արզումանյանը հպարտ է, որ Հայաստանն ունի Զարուհի Փոստանջյանի պես քաղաքացի, որն իր հասուն կյանքը նվիրել է իրավունքների ու ազատությունների համար պայքարին, որ Հայաստանում չլինեն քաղբանտարկյալներ: «Հայրենասիրությունը որպես մահակ օգտագործող այս կամ այն քաղաքական գործիչը նախ պետք է իր կենսագրությամբ, իր քայլերով ապացուցի, որ ինքը մտածում է Հայաստանի մասին, ոչ թե մտածում է ինչ-որ մեկին սպասարկելու եւ մի քանի քաղբանտարկյալի ինչ-որ մեկի վրեժխնդրության պատճառով 2-3 տարի ավելի բանտերում պահելու համար: Զարուհի Փոստանջյանը կատարել է իր քաղաքացիական պարտքը, կատարել է պրոֆեսիոնալ աշխատանք, դիմել է բոլոր այն պատգամավորներին, որոնք... Նույն տրամաբանությամբ խոսելիս պետք է ասել՝ Հայաստանը պետք է չընդունի մարդու իրավունքների միջազգային կոնվենցիան, քանի որ դրա տակ ստորագրել է նաեւ Ադրբեջանը կամ Թուրքիան: Սա աբսուրդ եւ հիվանդ մոտեցում է»:

Ն. Ս.

# Հեղափոխության թեական նախապայմաններ

*1-ին էջից*

Այսինքն՝ կաշառքը կամ քրեւորելով վերացնելը, իշխանական նավը վարողին մեկ ուրիշով (ընդդիմադիրով փոխարինելը) չի կարող նշանակել փոփոխություն, չի նշանակում համակարգի բարելավման սկիզբ: Բուրգի գոյությանն իրականում կարող է սպառնալ բուրգ ծնող պատճառների վերացումը, մյուս զուգահեռ բուրգերի պատճառահետեւանքային կապը կամաց-կամաց մաքրելով՝ դանդաղ, բայց ազգովին շարժումը: Մնացած խոսակցությունը, թե, օրինակ, այսինչ մաքուր մարդը, որ ղեկավարի բուրգը, կաշառք չի լինի, առնվազն երեսպաշտություն է, քանի որ կաշառքը կշարունակի ճամփորդել՝ այդ մարդուն շրջանցելով կամ... տապալելով:

Հիմա գանք այն խնդրին, թե Հայաստանում կա՞ն գոնե նվազագույն այն մի քանի գործոնները, որոնք պարտադիր են իշխանափոխության կամ հեղափոխության համար, անկախ այն բանից, որ մարդկանց՝ թող որ բավական ստվար խումբ խոսում է այդ մասին:

Աղքատության շատ բարձր տոկոս երկրում՝ գումարած սոցիալական խնդիրները լուծել խոստացող եւ կարողացող ուժ:

Ընդդիմադիր եւ իշխանամետ զանգվածների ուժերի՝ գոնե 50:50 փոխհարաբերակցություն:

Ղարաբաղի ստացված խնդիր, որի հայանպաստ լուծումը դուրս է իշխանության ուժերից:

Ահա գոնե այս նվազագույն երեք գործոնն առկա է Հայաստանում՝ դիտարկենք:

Սկսենք վերջինից. այն, որ ՀԱԿ-ականներն իրենց շրջանակը կոչում են շարժում, դա, մեղմ ասած, չափազանցություն է: Անգամ Հայոց համազգային շարժումը, իր ստեղծման պահից արդեն երկու-երեք տարի հետո շարժում չէր, այլ ոչ այնքան մեծաթիվ կուսակցություն, որն աստիճանաբար դեպի զրոյական վարկանիշ հասավ: Վերջին՝ ավագանու ընտրությունները, որոնք, ի դեպ, տողերիս հեղինակը որպես ընտրություն բովանդակային առումով կասկածի տակ է դրել, այնուամենայնիվ ցույց տվեցին, որ մարդկանց շատ գերակշիռ զանգված թքած ունի «ընդդիմադիր շարժում» կոչվածի վրա, քանի որ դա իր համար անհասկանալի մարդկանց եւ անհասկանալի նպատակների մի համախումբ է: Հենց դրանով պետք է բացատրել գուցե այդ գերակշիռ զանգվածի՝ կաշառման կամ այլ շահագրգռությունների հանդեպ պատրաստակամությունը: Իսկ որ երեկ բանտից դուրս եկած Ալիկ Արզումանյանն ասում էր, թե պետք չէ գիգանտամանիայի հետեւից ընկնել՝ հակադրվելով «շարժումը մարում է, 20 հազար էր վերջին հանրահավաքայինների թիվը» կարծիքներին, եւ եթե 4 դժգոհ քաղաքացի կա՝ պետք է բանակցել այդ 4-ի հետ, հասկանալ՝ ինչո՞ւ են դժգոհ: Որ կա դժգոհություն հասարակության մեջ՝ իհարկե կա, բայց դժգոհողների շատ մեծ մասը՝ Ալիկ Արզումանյանին չէ, որ հավատում է: Այդ դժգոհությունը մանրատվում է՝ մի մասը հավատում է երկրի նախագահին, մի մասը Ծառուկյանին, մի մասը՝ Դաշնակցությանը, այդ իսկ պատճառով կոնգրեսին հավատացողները հենց այնքան են, որով հեղափոխություն չես անի, եւ որով շարժումը մարում է: Իսկ դժգոհողներին գեներացնող նոր ուժեր են հարկավոր լինելու, որոնց մեջ չի երեւում դեռ՝ ի՞նչ դեր է ունենալու կոնգրեսը: Այնպես որ՝ դժգոհներ կան, բայց որ այդ դժգոհների բանակը հենց կոնգրեսինն է, նրա համակիրներն ու ընտրողները, սա առնվազն բլեֆ է: Այնպես որ՝ սոցիալական դժգոհների շերտը դեռ Հայաստանում հեղափոխության բալաստ չէ, որովհետեւ նրա տարբեր շերտերի խնդիրների մասնակի լուծումներ տեղի են ունենում, իսկ իշխանական եւ ընդդիմադիր ուժերի միջեւ 50:50 հարաբերակցություն, այն էլ խիստ վերապահումով, այն էլ՝ եթե բոլոր ընդդիմադիր ուժերը մի հրաշքով միավորվեն...

Ղարաբաղի խնդիրը, որը սովորաբար հայ հասարակության մեջ փոփոխություններ գեներացնող ամենապատասխան պատճառն է եղել մշտապես: Կոնգրեսական առաջնորդն ու իր համախոհների նեղ շրջանակը արտահերթ հանրահավաքը որպես պահեստային միջոց կիրառելով, հույս ունեին, թե միջազգային ճնշումների ներքո փաստաթղթի ստորագրում պարտադրելով ԼՂ հարցում՝ ռեզոնանս կլինի մեր ներքաղաքական կյանքում, եւ առհասարակ հարցի արագացումը կարող է երկրորդ կյանք տալ Ալիկ Արզումանյանի չսիրած բառով՝ մարող շարժմանը: Բայց արդեն նշաններ են երեւում, որ հերթական անգամ հարցը մնալու է հենց այդպես՝ կոնսերվացված, թեեւ Սարգսյան-Ալիեւ մոսկովյան հանդիպումից առաջ դժվար է նման բան ասելը: Այսպես, թեեւ հենց օրերս ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան հույս էր հայտնել, թե հուլիսի 17-ին Մոսկվայում Սարգսյան-Ալիեւ հանդիպմանը «կհաջողվի ամրապնդել Պրահայում եւ Սանկտ Պետերբուրգում արձանագրված առաջընթացը: Բացի այդ՝ ֆրանսիացի համանախագահն էլ հայտնի դարձրեց, թե մադրիդյան փաստաթղթի 15 սկզբունքներից 2-3-ն են ընդամենը համաձայնեցված: Բայց մինչեւ այժմ հայտնի էլ չէ, թե այդ ինչ սկզբունքներ են: Եթե այդպես կրիայի քայլերով են առաջ գնում, հազիվ թե մի 10 տարուց հարց լուծեն:

Դրան գումարած՝ իրեն, ինչպես միշտ, տարօրինակ է պահում Իլհամ Ալիեւը. «Վեստին» ասում է, թե համաձայնագրի ստորագրումից հետո զորքերը դուրս կբերվեն 5 շրջաններից, իսկ Քելբաջարից եւ Լաչինից զորքերի դուրսբերումն ակնկալվում է համաձայնագրի գործողության մեջ մտնելուց 5 տարի անց, որը եւ փոխզիջումային ժամկետ է համարում: Բայց արդեն դրանից 1 օր անց, չորեքշաբթի օրը, Սիրիայի նախագահի հետ համատեղ ասուլիսում հիշել է ՄԱԿ-ի ինչ-որ 4 բանաձեւ՝ որոնցով առանց որեւէ պայմանի պետք է ազատել ադրբեջանական տարածքները, թե բա՝ Հայաստանի ագրեսիային պետք է վերջ տրվի, Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պետք է վերականգնվի: Իսկ հայերի ասած ինքնորոշման իրավունքի մասին էլ՝ թե հայերը վաղուց ինքնորոշվել են... Հայաստանում:

Բացի այդ էլ, անգամ ռուս համանախագահ Մերզլյակովի ասածից է երեւում, թե հարցի լուծումը դեռեւս հեռու է: Նա ասում էր, որ լավ կլինի բանավեճը վիճելի կետերի շուրջը հրապարակային լինի: Այ այդտեղ է թաքնված շան գլուխը, որովհետեւ եթե երկու երկրների հասարակություններին տեղյակ պահվի մադրիդյան 15 կետի մասին, մի այնպիսի աղմուկ կբարձրանա, որ երկու երկրներն էլ պարզապես լույսի արագությամբ հեռու կսլանան խնդրի լուծումից: Ադրբեջանի արտգործնախարարը հենց երեկ է ասել, թե Ղարաբաղն Ադրբեջանի մաս է, որի իրավական կարգավիճակը պետք է որոշի Ադրբեջանը, բռնի տեղահանվածները պետք է վերադառնան Ադրբեջան, եւ դա հայկական կողմի հետ բանակցությունների մաս է, մինչդեռ Ս. Սարգսյանը այս երկու օրը հանդիպումներից մեկի ժամանակ ասաց, թե ԼՂ կարգավիճակի որոշումը Հայաստանի համար մնում է առանցքային:

Այնպես որ այս հարցի պատասխանն էլ, կարծես, ընդդիմության օգտին չէ: Հուսանք, որ որեւէ փաստաթուղթ հազիվ թե պարտադրվի, կողմերն այնքան էլ մոտ չեն լուծմանը, եւ մեր աստվածաշնորհ արմատականները հազիվ թե մոտակայքում շանս ստանան շահարկելու այդ թեման: Համենայն դեպս այս թեզը պնդելու կամ չպնդելու հեռանկարն ավելի հստակ կերեւա մոսկովյան հանդիպումից հետո:

Որ իրավիճակը Հայաստանի համար բարենպաստ չէ, ինչ-որ առումով կարելի է սպասել, քանի որ Ադրբեջանը նավթային խաղաքարտը շարունակում է աջուձախ խաղացնել, եւ այժմ անգամ՝ Ռուսաստանի հետ: Սակայն հազիվ թե գերտերությունների տարբեր շահերի հակակշռումը թույլ տա մեր ընդդիմության համար ցանկալի՝ արագացումն ու արումը ԼՂ հարցում:

AZG NEW 4.QXD 7/9/2009 10:30 PM Page 1



# Յուրաքանչյուրն ունի իր ճշմարտությունը, իսկ ճշմարտության վրա՝ թքած

## *Զովունու Ամո թաղամասի վրայով անցնող բարձրավոլտ հոսանքագծերի պատմությունը ուզածդ գլուխկոտրուկից բարդ է*

***Երբ գլխավերեւում տարօրինակ ձայնարկումներով լարեր են անցնում, ցավում է գլուխդ, սրտի աշխատանքն էլ դժվար է թվում, թերեւս գտնվելու վայրը Զովունու գյուղի Ամո թաղամասն է, որտեղ հիմնականում եզդիներ են ապրում ու ունեցած-չունեցած խնդիրները կապում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հետ: Իսկ խնդիրներ եզդիները Զովունիում շատ ունեն: Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղը տրամադրել էր այդ խնդիրներին անդրադառնալու հնարավորություն՝ «Լրագրողական առաքելություններ ռադիո եւ տպագիր մամուլի ներկայացուցիչների համար» ենթանախագծի շրջանակներում:***



Նախ տնկեցին հենասյուները, խոստանալով, թե էլեկտրականության բարձր լարման հոսանքագծերը կանցկացվեն միայն գծերի անցկացման տարածքի վրա գտնվող տների տեղափոխությունից հետո: Հետո, երբ եզդիները ամռանը սարում էին, քաշեցին գծերը եւ միացրին հոսանքը: Եվ սա դեռեւս 70-ականների սկզբին: Այսպիսին է Ամո թաղամասի եզդիների հիմնական դժգոհության պատմությունը, որ հավելյամբ արտահայտվում է առողջական լուրջ խնդիրներով:

Ավդալյանների եզդի ընտանիքը Զովունի գյուղի եզդիական Ամո թաղամասում մեծամասնություն է կազմում: Էջմիածնի Ջրառաս գյուղից 1936-ին Կոտայքի մարզ տեղափոխված Ավդալյանները գյուղի տարածքում մի քանի քրդական տուն են տեսել, ընդ որում, քրդերը հեռացել են եզդիների տեղափոխությունից ոչ շատ անց:

70-ականներին արդեն եզդիական Ամո գյուղի մի քանի տների վրայով, **Քյալաշ Ավդալյանի** ներկայացմամբ, անցկացվել են հոսանքատար բարձրավոլտ գծեր: «Իմ հերս ու հորոխպերս էին, բողոքեցին, ասացին, թե ուրիշ տեղում տուն կտան: Մինչեւ ժողովուրդը սար գնաց ամռանը, հետ եկանք, գծերն արդեն քաշել էին», պատմում է Քյալաշը:

Ամոյի եզդիներն ասում են, թե իրենց թաղամասում շատացել են սրտի կաթվածի դեպքերը, մարդիկ ճնշման խնդիրներ ունեն, իսկ անձրեւ գալիս միշտ անպակաս են պատահարները: Դրան ավելանում է, ըստ Քյալաշ Ավդալյանի, նաեւ Զովունու գյուղապետի անուշադրությունը Ամո թաղամասի նկատմամբ: Եզդիների ոչխարների աղլատեղերը, եզդիների խոսքերով, գյուղապետը վաճառել է, այդ տեղում կազինոներ են կառուցվել, ոռոգման ջուր եզդիներին չի տրվում, գյուղամեջի ճանապարհները չեն սարքվում, գազամատակարարում չի իրականացվում հենց միայն Ամո թաղամասում:

Քյալաշը պնդում է, թե անցյալ տարի «Հայաստանի էլցանցեր» ընկերությունից, նաեւ կառավարությունից ներկայացուցիչներ են եկել, խոստացել, թե բարձրավոլտ գծերը կտեղափոխեն, բայց այդպես էլ ոչինչ չի արվել: Քյալաշի կինը՝ Զինա Կարոյանն էլ, որ զրույցի պահին իրենց տան բակում օջախի վրա բալի մուրաբա էր եփում, իր հերթին դժգոհ է, որ հող չունեն, միայն անասուն պահելով են ընտանիք պահում: Ընտանիքն էլ բազմամարդ է՝ երեք որդի, յուրաքանչյուրն իր հերթին երեքական երեխա ունի, եւ բոլորը միասին են ապրում: Քյալաշ Ավդալյանի խոսքերով, իրենք 20 կով ունեն, 200 ոչխար, պանիր են պատրաստում, շուկայում վաճառում, ձմռանն էլ կաթը հանձնում են տարբեր ընկերությունների:

### Հոսանքագծերից զատ՝ բա գա՞զը, ջո՞ւրը...

**Ուսո Ավդալյանը** 76 տարեկան է, ինքն ու երկու եղբայրները սրտի կաթված են տարել, կինն ու որդին՝ նույնպես: Նա պատմում է, որ եզդիներն այս տարածք եկել են 1936-ին, իսկ 1965-ին ներկայիս Զովունի գյուղ են տեղափոխվել Ապարանի համանուն գյուղի որոշ բնակիչներ՝ հիմնելով գյուղի հայկական թաղամասը, որ եզդիական Ամոյից առանձնանում է Եղվարդ տանող ճանապարհով:

Ուսոյի տունն անմիջապես հոսանքալարերի տակ է, գրեթե 15 գիծ է ճքճքում Ուսոյի տան վերեւում: «Մենք էս հոսանքի տակ վառվում ենք, հանեք մեզ էստեղից կամ էս գծերը հանեք», ասում է Ուսոյի 53-ամյա, երկու անգամ սրտի կաթված տարած կինը՝ **Դիլու Թաժդինյանը**: «Բողոքել ենք դեռեւս Դեմիրճյանի ժամանակ, եկան, խոստացան, թե մեզ կտեղափոխեն, էդպես էլ չկատարեցին»:

**Սարգիս Ղուկասյանը** հայ է, որ ապրում է եզդիների թաղամասում արդեն 6 տարի: Նա էլ հավաստում է, որ անձրեւի ժամանակ հոսանքագծերի տակ գտնվող տներից մարդիկ փախչում են: **Այլազ Ավդալյանն** էլ Ամո թաղամասից է: «Եթե կողմնապահություն չեն անում, ինչո՞ւ եզդիների մայլեն գազ չկա: Ամեն ինչ ղրաղ դնենք, ինչի՞ մեզ գազ չեն տալիս, չէ՞ որ նույն հող ու ջրի մարդ ենք», բարձրավոլտ հոսանքագծերի թեմայից տարբեր բողոք է ներկայացնում Այլազը:

«Ուր ասես բողոքել ենք, չեն օգնում: Մի թիզ հող չեն տալիս, գոնե խոտ պահելու համար: 14 նաֆար ենք, 900 քմ տարածք ունենք, իրար հետ քնում ենք: Գոնե 1000 քմ տային, մի բան սարքեինք, ապրեինք», դժգոհում է Այլազը: Նրա հավաստմամբ, տարին մի քանի անգամ գալիս են, մագնիսական դաշտ ստուգում, «հետո էլ խաբում, հույս տալիս ու գնում»:

### Գյուղապետի իրականությունը ոչ մեկի հետ չի բռնում

Զովունու գյուղապետ **Սերժիկ Ավետիսյանը** համաձայն է, որ բարձրավոլտ գծերի տակ ապրելը վնասակար ու վտանգավոր է, բայց նշում է, թե գծերի տեղափոխությունը «հանրապետության բյուջեի կեսի չափ երեւի ծախս է պահանջում, դրա համար հարցը մնաց, չնայած նախագահ Քոչարյանի նախընտրական ծրագրում էլ կար»:

Զովունի համայնքի հողերից 74 հա գտնվում է բարձրավոլտ գծերի տակ, այդ թվում՝ մի մասը եզդիական Ամո թաղամասից: «Ժամանակին եզդիները դիմել են, 18 ընտանիքի բնակարան է հատկացվել, միայն մեկն է տեղափոխվել, մյուսները հրաժարվել են», ասում է Զովունու գյուղապետը:

Ոռոգման ջուր չի հատկացվում եզդիների թաղամասին, քանի որ տնամերձի կարգավիճակով այդ թաղամասում հողեր չկան, բայց, գյուղապետի հավաստմամբ, առաջիկայում ծրագիր կա ոռոգման ցանցի կառուցման, որ ֆինանսավորվելու է «Հազարամյակի մարտահրավերներ-Հայաստան» ծրագրով: Գազն էլ, Ավետիսյանի խոսքերով, համայնքի կատարելիք խնդիրը չէ, այլ՝ «Հայռուսգազարդ» ընկերությանը:

Զովունու գյուղապետը պնդում է, թե հողերի սեփականաշնորհման ժամանակ եզդիների թաղամասի որոշ հատված մտնում էր Երեւանի մեջ, ուստի հող չի տրվել: Ով էլ դիմել ու գյուղատնտեսական նշանակության հողեր է ստացել, հետո հրաժարվել է, քանի որ զբաղվում են հիմնականում անասնապահությամբ:

Գյուղը փաստացի 7000 բնակիչ ունի, գրանցված են 5400-ը, որից 28 տոկոսը՝ եզդիներ, որոնցից էլ ներկա պահին ապրում են գյուղում 1100-ը: Գյուղի բացառիկությունը, ըստ գյուղապետի, 12 հազար ոչխարն են, 1200 խոշոր եղջերավոր անասունները: «Շատ բնակիչներ միտումնավոր են մտել բարձրավոլտ գծերի տակ», պնդում է գյուղապետ Ավետիսյանը, իսկ կազինոների առումով էլ ասում, թե մենթալիտետի հարց է: Մինչդեռ Զովունուց, ըստ նրա, ոչ մի երիտասարդ կազինո չի գնում, բացի այդ, կազինոների համար տարածքի տրամադրումը համայնքի համար եկամտաբեր է:

Ավետիսյանը պնդում է, որ եզդիներն ուզում են կազինոների դիմաց գտնվող հողատարածքները, որ եզդիների խոսքով, իրենց ոչխարների հին աղլատեղերն են, զավթել են: «Բայց ի՞նչ աղլատեղ Երեւանի քթի տակ, բացի այդ, դրա տակ գերեզմաններ են, պատմամշակութային հուշարձաններ», ներկայացնում է գյուղապետը: Բացի այդ, այդ հողերը տնօրինում է էլցանցը, քանի որ դրանց վրայով անցնում են բարձրավոլտ գծերը, եւ այդտեղ խստիվ արգելվում է հողահատկացումները:

### Տնե՞րն են եղել սկզբում, թե՞ հոսանքագծերը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության անվտանգության տեխնիկայի տեխնիկական շահագործման եւ հուսալիության դեպարտամենտի պետ **Ռոմիկ Հարությունյանը** վստահեցնում է, թե ժամանակին, երբ անցկացվել են բարձրավոլտ գծերը, դրանց անվտանգության գոտում տներ չեն եղել: Անվտանգության գոտին փոփոխական է՝ կախված բարձրավոլտ գծի լարման մեծությունից, սակայն ամեն դեպքում այդ տարածքներում որեւէ շինարարություն անթույլատրելի է:

«Գյուղը գծից բավականին հեռու էր գտնվում, հաղորդագծերի տակ գյուղ չի եղել, միայն ոչխարները պահելու տեղեր՝ ցանկապատված», ներկայացնում է Ռոմիկ Հարությունյանը, ավելացնելով, որ 80-ականներին տեղի բնակիչները կամաց-կամաց սկսել են կապիտալ կառույցներ անել, սկզբում քարե ցանկապատեր են կառուցվել, գոմեր, 90-ականներին արդեն այդ գոմերը համարելով սեփականություն՝ սկսել են առանձնատներ կառուցել:

Այս տարածքում մի մասը սեփականության իրավունք ունի, որոնց էլ ժամանակին հատկացվել են բնակարաններ, մինչդեռ հոսանքագծերի տակ գտնվող անվտանգության գոտիների հողատարածքները չեն կարող օտարվել առանց տվյալ դեպքում ՀԷՑ-ի հետ համաձայնեցման, ինչը չի արվել:

ՀԷՑ-ի անվտանգության եւ վերահսկողության տնօրենության ներկայացուցիչ **Շավարշ Ավետիսյանի** մեկնաբանությամբ, Զովունի գյուղում ներկա դրությամբ 92 բնակելի տուն ստացել է սեփականության իրավունք, 40-ը կառուցված են անվտանգության գոտիների խախտումներով, ուստի չունեն սեփականության իրավունք, 35-ն էլ կառուցվել են առանց համայնքապետի թույլտվության, դրա համար էլ գրանցում չեն ստանում կադաստրում:

«Այստեղ ազգային խտրականության հարցն է շահարկվում, մինչդեռ Ամո թաղամասը հայտնվել է հոսանքագծերի անցկացումից հետո», պնդում է Ավետիսյանը: Ըստ նրա, երկու ելք կա: Կամ տեղափոխել գծերը, ինչը գծերը Հրազդանի կիրճի մյուս ափ տեղափոխելու պարտադրանքի պատճառով գործնականում տեխնիկապես եւ ֆինանսապես ներկա պահին հնարավոր չէ: Կամ առկա օրենսդրության շրջանակներում փորձել լուծել հարցը:

Իսկ օրենսդրական հիմքի առումով գոյություն ունի 2004-ի կառավարության որոշում, որի համաձայն այն տները, որոնք անմիջապես հոսանքագծերի տակ են, ենթակա են քանդման եւ փոխհատուցման շուկայական արժեքով: Այս կատեգորիայից նրանք, ովքեր ստացել են ժամանակին բնակարաններ կամ չունեն կառուցման թույլտվություն, փոխհատուցում չեն կարող ստանալ: Տները, որոնք եզրային հաղորդալարերից 5 մ-ից մինչեւ 20 մ անվտանգության գոտում են, կարող են շահագործվել՝ անվտանգության լրացուցիչ միջոցառումների իրականացմամբ:

### Տեղափոխություն խոստացել էին, բայց միայն մեկ բնակարան հատկացվեց

Եզդիների ազգային միության նախագահ **Ազիզ Թամոյանի** ներկայացմամբ, Զովունի գյուղի Ամո եզդիական թաղամասում մոտ 350 ընտանիք կա, որոնց մի մասը դեռեւս մնացել է գյուղում ու զբաղվում է անասնապահությամբ: 1991-ին հողի սեփականաշնորհման ժամանակ 350 դիմում է ներկայացվել Թամոյանի միջոցով, բայց հող չի տրամադրվել եզդիներին: Ըստ Թամոյանի, Ամո գյուղը գոյություն ունի 1915 թվից:

60 հզ. եզդիների համայնքն ամենամեծն է Հայաստանում, ու Թամոյանը Ամո թաղամասի խնդիրների առումով չի բարձրացնում ազգային խտրականության հարց: «Հայերը գյուղում ունեն ոռոգման ջուր, գազ, կոյուղի, եզդիները չունեն: Գազի առնչությամբ գյուղապետի ասածները սուտ են», ասում է Թամոյանն ու ի հաստատումն սեփական խոսքերի ներկայացնում «Հայռուսգազարդ» ընկերության՝ իր դիմումին տված պատասխանը:

Դրա համաձայն, ընկերությունն իր հասանելիքն արել է՝ Զովունի գյուղի գազաֆիկացման աշխատանքների կատարման առումով դեռեւս 2004-2005 թթ.: Համայնքապետարանը եւս այդ ընթացքում պետք է իրականացներ գյուղի մնացած, այդ թվում՝ եզդիաբնակ թաղամասերի թվով 150 առանձնատների գազաֆիկացման աշխատանքները, ինչը չի արվել:

1962-72 թթ. Ամո գյուղի ղեկավար Ազիզ Թամոյանը նաեւ պնդում է, թե հոսանքագծերը քաշելիս այդ տարածքում տներ եղել են, մոտ 20-ը: Գյուղացիները փորձել են ընդդիմանալ, բայց ստացել են դատարկ խոստումներ: Ինչ վերաբերում է այդ բնակիչներին այլ տեղում բնակարաններով ապահովելուն, ապա Թամոյանը վստահեցնում է, որ բնակարաններ խոստացել են, բայց հատկացրել են միայն մեկը: Ներկա դրությամբ բարձր լարման հոսանքալարերի տակ մոտ 40 տուն կա:

Թամոյանը նաեւ վստահեցնում է, թե ոռոգման ցանց կա, բայց ջուր չեն տալիս: Սրբավայր կառուցել թույլ չեն տալիս, փակել են գերեզմանոց տանող ճանապարհի մի հատվածը:

### Հողաշինության բաժինն ու կադաստրն իրար հակասում են

Կոտայքի մարզպետարանի հողաշինության բաժնի վարիչ **Լյովա Պետրոսյանը** նշում է. «Ամո թաղամասը հիմնվել է 1930-ականներին, երբ այնտեղ որեւէ լար չի եղել: Զովունի գյուղը հիմնվել է ավելի ուշ՝ 1964-ին, երբ Ամո եզդիական բնակավայրին կից տարածք են տեղափոխվել ապարանցիներ, սակայն գյուղը կառուցել են Ամոյից ավելի հյուսիս»:

«Այնտեղ տարբեր հնության տներ կան, որ երեւում է անգամ անզեն աչքով: Հին տները բնականաբար մինչեւ հոսանքալարերի այնտեղ հայտնվելն են կառուցված եղել: 80-ականներից այդ բնակիչներին պարբերաբար հավաստիացրել են, որ այդ լարերը տեղափոխվելու են»:

«Զովունի գյուղն ու Ամո թաղամասը մինչեւ 1991 թվականը եղել են Երեւանի կազմում՝ Երեւանի քաղաքային սովետի օգտագործման հողեր են եղել: Որեւէ իրավական հիմք եզդիները չեն ունեցել տուն կառուցելու համար, քանի որ մինչեւ 1991 թվականը մարդիկ սեփականություն ունենալու իրավունք չունեին, ինչպես նաեւ տնամերձ ունենալու իրավունք»:

Կոտայքի մարզի Եղվարդի տարածաշրջանի պետական կադաստրի գրանցման բաժնի պետ **Գագիկ Հարությունյանը** ներկայացնում է. «Ես ինքս Զովունի գյուղից եմ, մենք Զովունի ենք տեղափոխվել 1964-ին Ապարանից: Երբ մենք եկել ենք, Ամո գյուղում բնակիչներ են եղել, բայց հոսանքալարերի տակ տներ չեն եղել: Հետո, երբ առանձին ծուխ են առանձնացրել, նոր տներ են կառուցել, հենց լարերի տակ»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 5.QXD 7/9/2009 10:29 PM Page 1



# Թուրքական սփյուռք

## *Դա Թուրքիայի առջեւ Եվրոպայում եւ ԱՄՆ-ում բացում է թուրքական լոբբին հայկականին հակադրելու լայն հեռանկար*

Դեռեւս 1991-ին, ճանաչելով Հայաստանի անկախությունը, դիվանագիտական հարաբերությունների համար նրան Թուրքիան նախապայմաններ էր առաջադրում: Դրանցից մեկն էլ հայկական սփյուռքի «հակաթուրքական» գործունեության կասեցումն էր: «Հակաթուրքականը» ենթադրում էր կասեցնել սփյուռքահայության Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ջանքերը: Մինչդեռ այդ գործունեությունը ծավալող սփյուռքը հենց ցեղասպանության հետեւանքով էր առաջացել, զրկվելով պատմական հայրենիքից:

Թուրքերի արտահոսքը Եվրոպա սկսեց 1960-ականներին, երբ նրանք աշխատուժի կարգավիճակով հաստատվեցին Գերմանիայում: 1970-ականներին թուրքերը գաղթեցին եվրոպական այլ երկրներ, մասնավորապես Հոլանդիա, Ֆրանսիա, իսկ 1980-ականներին, կապված նաեւ ԱՍԱԼԱ-ի գործունեության հետ, ձեւավորվեցին իբրեւ համայնք, որի ակտիվ զանգվածը իսկույն քաղաքականացվեց Թուրքիայի աջակցությամբ՝ ստեղծելով եվրոպական երկրներում Անկարայից ուղղորդվող բազմաթիվ միություններ եւ կազմակերպություններ:

Եթե հայկական սփյուռքի առաջացման պատճառը Հայոց ցեղասպանությունն էր, ապա թուրքական սփյուռքի արագ կազմակերպումը մեծապես պայմանավորվեց սփյուռքահայության ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերի կասեցմամբ: Պետական աջակցությունն ու պետականորեն ուղղորդումը դարձավ թուրքական այսպես կոչված սփյուռքի գլխավոր առանձնահատկությունը:

Թեեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը ծավալվում է, այսինքն՝ Եվրոպայի թուրքական միություններն ու կազմակերպությունները չեն կարողանում կատարել գործընթացի կասեցման Թուրքիայի առաջադրանքը, սակայն քաղաքականացված թուրքական համայնքներին հաջողվում է ներթափանցել եվրոպական երկրների խորհրդարաններ եւ առաջադրված թեկնածուներով հետզհետե համալրել տեղական ինքնակառավարման մարմինները:

Եվրոպական երկրներում խորհրդարաններին եւ տեղական ինքնակառավարման մարմիններին թեկնածուներ առաջադրելը թուրքական սփյուռքի մեկ այլ առանձնահատկությունն է: Դա, ինչ խոսք, Թուրքիայի առջեւ բացում է արտերկրում թուրքական համայնքների միջոցով լոբբիստական լայն գործունեություն ծավալելու եւ թուրքական լոբբին ոչ միայն հայկականին հակադրելու, այլեւ դրա կարողությունները սեփական նպատակներին ծառայեցնելու հեռանկարը:

Ակնհայտ է, որ թուրքական լոբբիի հզորացման դեպքում, որի նախադրյալներն արդեն ստեղծված են, դրա գործունեության շրջանակները չեն սահմանափակվի հայկականին հակակշռելու կամ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու առաջադրանքի կատարմամբ: Այլ կերպ, հարցը չափազանց լուրջ է ոչ միայն հայկական սփյուռքի, այլեւ Հայաստանի եւ հայ ժողովրդի առջեւ դրված խնդիրների առումով:

Թուրքական սփյուռքի մասին որոշակի պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ Հոլանդիայում բնակվող թուրքերի թիվը շուրջ 320 հազար է: Նրանք Նիդերլանդների խորհրդարանում ունեն 3 պատգամավոր, իսկ տեղական կառավարման մարմիններում՝ 110 ներկայացուցիչ: Այս տվյալները քաղել ենք Գյոքնուր Աքչադաղի հոդվածից, որը հուլիսի 4-ին հրապարակվել է Նյու Յորքի Turkishny.com կայքէջում: Հեղինակը տվյալներ է ներկայացնում նաեւ եվրոպական այլ երկրների եւ ԱՄՆ-ի թուրքական համայնքների մասին, որոնց կանդրադառնանք առաջիկայում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# «Մեծ ութնյակը» քննարկում է տնտեսության, անվտանգության եւ կլիմայի հարցերը

Իտալիայի Ակվիլա քաղաքում հուլիսի 8-ից անցկացվող «Մեծ ութնյակի» երկրների ղեկավարների եռօրյա գագաթնաժողովում քննարկման գլխավոր թեմաներն են համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, մոլորակի միջուկային անվտանգությունը, հակաահաբեկչական պայքարը եւ ընդհանուր կլիմայական փոփոխությունների մեղմացման խնդիրը: Մասնավորապես Գերմանիան շեշտը դնում է «ջերմոցային էֆեկտ» առաջացնող գազերի արտանետումների կրճատման անհրաժեշտության վրա: «Գերմանական ալիք» ռադիոկայանը նշում է, որ կանցլեր Անգելա Մերկելը աշխարհի պետություններին առաջարկել է ստանձնել կոնկրետ պարտավորություններ, որպեսզի դարակեսին մոլորակի ջերմաստիճանը 2 աստիճանով ցածր լինի ներկայիս մակարդակից:



ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հանդես է եկել եկող տարվա մարտին Վաշինգտոնում միջուկային անվտանգության հարցերին նվիրված գագաթնաժողով անցկացնելու նախաձեռնությամբ: Նախաձեռնությունը հավանության է արժանացել: Մոտ ժամանակներս Օբաման մասնակցության հրավերներ պետք է ուղարկի 25-30 երկրների ղեկավարների: Այդ մասին լրագրողներին հայտնել է նրա անվտանգության հարցերի գծով օգնականը:

Առաջիկա գագաթնաժողովում մասնավորապես պետք է քննարկվեն միջուկային զենքի բաղադրիչների ընդհատակյա առեւտրի դեմն առնելու եւ միջուկային ահաբեկչության դեմ պայքարելու հարցերը:

Ակվիլայում շարունակվող գագաթնաժողովում «Մեծ ութնյակի» երկրների ղեկավարները ընդունել են փաստաթուղթ, որով «խոր մտահոգություն» է արտահայտվում Իրանի նախագահական ընտրություններից հետո այնտեղ ստեղծված քաղաքական ճգնաժամի, ինչպես նաեւ իրանցիների միջուկային ծրագրի կապակցությամբ:

Ընդունված հայտարարության մեջ «Մեծ ութնյակը» դատապարտում է Իրանի իշխանությունների գործողությունները, որոնք հանգեցրին զանգվածային անկարգությունների, ընդդիմության եւ ոստիկանության արյունահեղ բախումների: Նաեւ կոչ է արվում վերջ դնելու Իրանում ապրող օտարերկրացիների հանդեպ կիրառվող բռնություններին:

Ինչպես նշում է Ֆրանսպրես գործակալությունը, փաստաթուղթն այդուհանդերձ շատ պատժամիջոցներ չի նախատեսում Իրանի նկատմամբ եւ միայն կոչ է անում կատարել միջուկային ծրագրի հետ կապված ՄԱԿ-ի բանաձեւերը: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ուիլյամ Բեռնսը գտնում է, որ ընդունված է լուրջ փաստաթուղթ, որն արտացոլում է Իրանի նկատմամբ վճռական քայլերի դիմելու անհրաժեշտությունը:

ՌԴ պատվիրակության անդամներին վկայակոչելով, ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ գագաթնաժողովում ընդունվել է նաեւ երկու հայտարարություն՝ կապված զանգվածային բնաջնջման զենքի եւ ահաբեկչության հետ:

# Կազմվել է 500 խոշորագույն ընկերությունների ցանկը

Ամերիկյան Fortune հանդեսը կազմել է աշխարհի 500 խոշորագույն ընկերությունների վարկանիշները: Ամեն տարի կազմվող ցանկում տեղերը բաշխելիս Fortune-ը գլխավոր չափանիշներ է դարձնում կորպորացիաների անցյալ տարվա հասույթը եւ շահույթը:

Ցանկում առաջին տեղն զբաղեցնում է անգլո-հոլանդական Royal Dutch Shell նավթի ու գազի կորպորացիան: 2008-ին դրա հասույթը կազմել է 458,361 մլրդ դոլար, շահույթը՝ 26,277 միլիարդ: 2008-ին ընկերությունը զբաղեցնում էր 3-րդ տեղը: Իսկ անցյալ տարվա առաջատար Wal-Mart մանրածախ առեւտրի ցանցը այժմ հայտնվել է 3-րդ տեղում. հասույթը 405,607 դոլար է, շահույթը՝ 13,4 միլիարդ:

Երկրորդ տարին անընդմեջ ցանկի 2-րդ տեղը զբաղեցնում է Exxon Mobil նավթագազային ընկերությունը, որի հասույթը 2008-ին կազմել է 442,851 մլրդ, շահույթը՝ 45,22 մլրդ դոլար:

Ինչ վերաբերում է ռուսական խոշոր ընկերություններին, «Գազպրոմը» զբաղեցնում է 22-րդ տեղը (անցյալ տարի 47-րդն էր): 2008-ին ընկերության հասույթը կազմել է 141,454 մլրդ, շահույթը՝ 29,864 մլրդ դոլար:

«Լուկօյլ» նավթային ընկերությունը 90-րդից բարձրացել է 65-րդ տեղը. 2008-ին հասույթը կազմել է 86,34 մլրդ, շահույթը՝ 9,144 մլրդ դոլար:

«Ռուսնեւտը» 158-րդ տեղում է: 2008-ին ընկերության հասույթը կազմել է 46,985 մլրդ դոլար:

ՕԲԱՄԱՅԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ԱՅՑԸ

# Նախագահական այցերի ոչ ցուցադրական կողմերը

ԱՄՆ-ի նախագահ «Բարաք Հուսեյնովիչ Օբամայի» (ըստ ռուսական թերթերից մեկի արամտության) Մոսկվա կատարած աշխատանքային այցի վերաբերյալ ռուսաստանյան ԶԼՄ-ների պերճ մեկնաբանությունների ալիքներից այդպես էլ պարզ չդարձավ, թե որեւէ շոշափելի առաջընթաց (ճեղքում) կնկատվի՞ ինչպես երկկողմ հարաբերությունների, այնպես էլ միջազգային իրադրության բարելավման տեսանկյունից: Համատարած ենթադրություններ, վարկածներ, հույսեր, երեւակայումներ եւ այլն: Հոգնելով լուրջ դեմքերով արված անորոշություններից այդ առատ հոսքից, որոշեցի «**Ազգի**» պատվարժան ընթերցողներին այս անգամ ներկայացնել այցի... տեխնիկական կողմը, ինչի նկատմամբ անտարբեր չգտնվեց նաեւ ռուսական մամուլը: Իրականում «ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ժամանեց Մոսկվա» ստանդարտ արտահայտությունը ոչինչ չի ասում դրա իրագործման տեխնիկական բարդությունների եւ յուրահատկությունների մասին, որը, կարծում եմ, հետաքրքրական կլինի շատերի համար:

Օբամայի այցին Ռուսաստանում սկսել են պատրաստվել դեռեւս այս տարվա սկզբին, երբ արդեն երկուստեք պայմանավորվել են ամսաթվի շուրջը: Գարնան կողմ Կրեմլում հաստատվել է հյուրերի ընդունման հատուկ պլան, որտեղ ամերիկյան կողմի ցանկությամբ մտցվել են Օբամայի անձնական պահպանության «ավելի ազատ դերին» վերաբերող ճշգրտումներ (խոսքը վերաբերում է այն բանին, որ ռուսական կողմը չպետք է խառնվի ամերիկացի գաղտնի գործակալների տեղաբաշխման գործին):

Եվ այսպես, Օբաման ընտանյոք՝ կնոջ եւ երկու աղջնակների հետ ուղղաթիռով Սպիտակ տնից մեկնել է Վաշինգտոնի մերձակայքում գտնվող ավիաբազա, որտեղ նրան կազմուպատրաստ սպասել է գերտերության թիվ մեկ օդանավը՝ սպիտակ-երկնագույն «Բոինգ 747-200B»-ը: Ի՞նչ է նախագահական ինքնաթիռը: Դա երեքհարկանի «շինություն» է, որն ունի աշխատասենյակ, կոնֆերանսների սրահ, լոգարան, ննջասենյակներ, մարզասրահ, բուժսենյակ, ընդունարան եւ այլն: Խոհանոցը կարող է միանգամից սպասարկել 100 հոգու: Վերնամասում՝ օդաչուների կողքին կա նաեւ հրամանատարական կետ, որտեղից երկրի գերագույն գլխավոր հրամանատարը կարող է հրամաններ արձակել միջուկային պատերազմի բռնկման դեպքում: Ինքնաթիռն առանց վառելիքի վերալցարկման կարող է հաղթահարել 15 հազար կիլոմետր տարածություն:

Այցի շեմին Մոսկվա են ժամանել ամերիկյան պատվիրակության առաջնեկները՝ մի քանի «Բոինգներ»: Դրանցից մեկում գտնվել է նախագահական գերժամանակակից զրահապատ «Կադիլլակը», որը պատրաստված է պողպատից, ալյումինից, տիտանից եւ կերամիկայից: 15 վայրկյանում կարող է զարգացնել առավելագույն արագությունը՝ ժամում 100 կիլոմետր: Զրահի հաստությունը հասնում է 20 սանտիմետրի: Նախագահը կարող է օգտվել շարժական սեղանից, նոութբուկից եւ արբանյակային հեռախոսակապից՝ փոխնախագահի ու Պենտագոնի հետ ուղիղ գծով: Բնականաբար, զրահամեքենան հագեցած է նորագույն պաշտպանական տեխնիկայով եւ ունի նույնիսկ երկու գնդացիր:

Օբամայի ինքնաթիռը Մոսկվայում վայրէջք է կատարել նորակառույց «Վնուկովո-2» օդանավակայանում: Քանի որ այցը պաշտոնական չէր, այլ աշխատանքային, ապա նրան «զինատեսակներ» չեն դիմավորել: Հյուրերը պատվո ուղեկցությամբ զրահամեքենայով մեկնել են Կրեմլ:

Ընդունող կողմը Օբամայի տեղաշարժման անվտանգության ապահովման համար հատկացրել էր հատուկ ծառայությունների եւ միլիցիայի մոտ 10 հազար աշխատակից, որոնք մետր առ մետր հետազոտել են ծրագրված բոլոր երթուղիները, ստուգվել են դրանք ընդգրկող շենքերի այն բնակիչները, որոնք օրինական իրավունք ունեն կրելու զենք: Ստուգվել են նաեւ կոյուղու բոլոր անցքերը, վերգետնյա եւ ստորգետնյա անցումները: Սակրավորները «պեղել» են բոլոր խարխլված ասֆալտապատ հողատարածքները:

Տեղաշարժման բոլոր ուղիները փակվել են, «Կադիլլակին» չի խանգարել ոչ մի փոխադրամիջոց, իսկ լուսակիրները ցույց են տվել միայն իրենց չընդհատվող կանաչ լույսը:

Օբաման Մոսկվայից մեկնեց Իտալիա մասնակցելու համաշխարհային լիդերների հանդիպմանը: Ե՛վ ժամանելու, ե՛ւ մեկնելու ժամանակ Ռուսաստանի տարածքում նրա օդանավը աչալրջորեն հսկել են տեղի ռազմաօդային ուժերի ու հակաօդային պաշտպանության ինքնաթիռներն ու ուղղաթիռները:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մոսկվա

# ԿԺԴՀ համակարգչահենները գրոհել են ԱՄՆ պետկառույցների կայքերը

ԱՄՆ իշխանությունները լուրջ կասկածներ ունեն, որ երկրի պետկառույցների կայքէջի վրա օրերս ձեռնարկված գրոհների հեղինակները հյուսիսկորեացի համակարգչահեններն են: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ նրանց կասկածում են նաեւ հարավկորեական ռեսուրսների վրա ձեռնարկված գրոհների մեջ:

Գործակալության աղբյուրների տվյալներով, այդ բոլոր գրոհներն իրականացվել են ԿԺԴՀ տարածքում գտնվող համակարգիչներից: Բայց դա չի նշանակում, թե համակարգչահենների թիկունքին կանգնած են ԿԺԴՀ կառավարությունը կամ հատուկ ծառայությունները:

ԱՄՆ պետկառույցների վրա գրոհը ձեռնարկվել էր հուլիսի 4-ին՝ հենց ԱՄՆ-ի Անկախության օրը: Գրոհի հետեւանքները լիովին վերացնելու համար ամերիկացիներից պահանջվել էր երեք օր:

Գրոհի հետեւանքով շարքից հանվել էին ԱՄՆ դաշնային առեւտրի հանձնաժողովի, ֆինանսների նախարարության, տրանսպորտի նախարարության եւ պետության առաջին անձանց անվտանգությունն ապահովող գաղտնի ծառայության կայքերը: Համակարգչահենների թիրախ էր դարձել նաեւ Սպիտակ տան կայքը, բայց նրանց չէր հաջողվել դա շարքից հանել:

Իսկ Հարավային Կորեայում ընթացիկ շաբաթվա սկզբին թիրախներ էին դարձել պաշտպանության նախարարության, խորհրդարանի եւ երկրի նախագահի կայքերը: Ժամանակավորապես շարքից հանվել էին նաեւ Shinhan Bank-ի, Korea Exchange Bank-ի ինտերնետային ներկայացուցչությունները:

# Նվիրում Կոմիտասին

Այս անվանումն էր կրում Երեւանի կամերային երաժշտության տանը անցկացված դաշնակահար Արմեն Մանասյանի մենահամերգը: Հայ մեծ երգահանի ծննդյան 140-ամյակի հետ կապված ընթացիկ տարին նպաստում է նրա ժառանգության նկատմամբ հետաքրքրության աճխուժացմանը: Շատ ուրախալի է, որ երիտասարդությունը եւս հետաքրքրություն է հանդես բերում:

1906 թվականին Կոմիտասի ստեղծած դաշնամուրային Յոթ պարը (համերգային պրակտիկայում սովորաբար առկա է Վեց պարի հրատարակությունը) իրավամբ համարվում է ազգային դասական արվեստի մարգարիտ: Դաշնակահարների համար դա փորձաքար է. երաժշտական հյուսվածքը թափանցիկ է եւ ռիթմիկ առումով հղկված, իսկ բնական ձայնաշարերի վրա հիմնված հարմոնիան ձեւավորվում է դաշնամուրի ամբողջ ծավալի տարածքում:

Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի 4-րդ կուրսը նոր ավարտած (պրոֆեսոր Սերգեյ Քեչեկի դասարան, որի ղեկավարությամբ Արմենը պարապում է տասը տարի՝ Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում սովորելու ժամանակներից) Արմեն Մանասյանը Կոմիտասի Պարերի կատարմանը մոտեցել է ինչպես որոշակի գեղագիտական խնդրի լուծման: Կանանց նրբագեղ պարերի շարանը («Մանուշակի»-«Երանգի»-«Ունաբի»-«Մարալի»-«Շուշիկի»-«Հետ ու առաջ»-«Կարնո շորոր») Մանասյանը ներկայացրեց ժամանակից ասես խունացած գույներով միասնական ինչյունային պաննոյի տեսքով, ինչն առավել սեւեռուն ունկնդրություն էր պահանջում ընկալման համար:

Պետք է ասել, որ ավանդական եվրոպական նվագացանկով դաստիարակված մեր դաշնակահարները, որպես կանոն, պատրաստ չեն ուսանողական տարիներին նվագելու Կոմիտասի պարերի ամբողջ շարքը: Պրոֆեսոր Քեչեկը, Արմենին ճիշտ ուղու վրա դնելով, գնահատեց նրա ներքին մտահավաքությունը, վերլուծականության հակումը, որոնք այնքան կարեւոր են Կոմիտաս կատարելու համար:

Պարերից հետո Արմեն Մանասյանը կատարեց Կոմիտասի երգերի հայտնի համերգային փոխադրումները, որոնք պատկանում են 20-րդ դարի երկրորդ կեսի երկու խոշորագույն հայ դաշնակահարների՝ Ռոբերտ Անդրեասյանի եւ Գեորգի Սարգսյանի գրչին: Կոմիտաս-Անդրեասյանի «Գարուն ա» եւ «Կաքավիկ», Կոմիտաս-Սարգսյանի «Քելեր-ցոլեր» եւ «Երկինքն ամպել է» կոնցերտային պիեսները մտնում են մեր բոլոր դաշնակահարների նվագացանկի մեջ: Իր մեկնաբանության մեջ Մանասյանը ձգտում էր ընդգծել Կոմիտասի եւ նրա հետեւորդների աշխարհների ծագումնաբանական կապը եւ ընդհանրությունը: Թեեւ այդ պիեսների վիրտուոզությունն ու ազատ պոեմի բնույթը հանգեցրին լայնահունչության, Մանասյանին հաջողվեց որսալ գլխավորը՝ կոմիտասյան սրբությունների հոգեւոր մաքրությունը:



Երիտասարդ դաշնակահարի կենսագրության մեջ բախտորոշ նշանակություն ունեցան 2004-2005 թվականները, երբ նա դարձավ պատանի դաշնակահարների Ա. Բաբաջանյանի անվան հանրապետական մրցույթի երկրորդ մրցանակի դափնեկիր: Ավելի ուշ Փարիզում հաղթեց Գալուստ Գյուլբենկյան միջազգային հիմնադրամի կազմակերպման Flame («Հուր») միջազգային մրցույթում (հիշեցնենք, որ հիմնադրամի ֆրանսիական մասնաճյուղը բացվել է 1965 թ. Փարիզում): Առաջին մրցանակից բացի, Արմենը ստացավ երկու հատուկ մրցանակ, այդ թվում Գյուլբենկյան հիմնադրամի մրցանակը:

Փարիզի երաժշտական ընկերությունների հետ համագործակցությունը (որի շնորհիվ Արմենն այնտեղ առանձին ելույթներ ունեցավ) հանգեցրին 2009 թ. Պ. Չայկովսկու «Տարվա եղանակների» ձայնագրությամբ սկավառակի թողարկմանը: Պաշտաճը հասուցելով Մանասյանի քնարապոետական ձիրքին եւ ոճաբանական կռահողությանը, այդուհանդերձ մենք համաձայն չենք Չայկովսկու «Տարվա եղանակների» 12 պիեսները ուրիշ հաջորդականությամբ կատարելու նրա ընտրությանը:

Մանասյանի քնարապոետական ընդունակությունների վկայությունն էր գրախոսվող համերգի երկրորդ մասը, որտեղ կատարվեց Լ. վան Բեթհովենի թիվ 21 դո մաժոր Սոնատը («Ավրորա», երկ 53): Ընտրելով եզրամասերի առավել հանդարտ տեմպեր, դաշնակահարը սոնատը մոտեցրեց հովվերգական տրամադրությանը: Դրա հետեւանքով շահեցին սոնատի քնարական-իդիլլական պատկերները, փոխարենը դրան բնորոշ ներքին դրամատիկ ուժը այդպես էլ մնաց չբացահայտված:

Կարծես թե Մանասյանը ուժ էր կուտակում համերգն ավարտած Ֆ. Լիստի վիրտուոզ պիեսի՝ Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայի երկու թեմաներով ֆանտազիաների համար, որի կատարումը ունկնդիրներին գերեց գեղարվեստական եւ տեխնիկական խնդիրների ներդաշնակությամբ: Վիրտուոզ կառույցների բարդությանը ցուցադրաբար չդիմակայելով (Լիստը ստեղծագործությունը գրել է 1842-ին, իսկ 1912-ին «Ֆիգարոյի» այդ կոնցերտային ֆանտազիան խմբագրել է դաշնամուրային փոխադրումների մեկ ուրիշ վարպետ՝ Ֆերուչչո Բուզոնին), հմտորեն տիրապետելով ծավալուն ձեւին, Մանասյանը ստեղծեց կենսահաստատ էներգիայի վառ, տպավորիչ պատկեր: Մոցարտյան երաժշտությունից բխող կենսական ուժը, Լիստի բուռն խառնվածքով կրկնապատկելով՝ ի դեմս հայ երիտասարդ դաշնակահարի գտավ ճիշտ մեկնաբանի:

**ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Արվեստագիտության դոկտոր**

# Ուշագրավ աշխատություն

## Նվիրված հայ երգիծանկարչությանը

**Մեր թերթը սովորություն չունի անդրադառնալու թեկնածուական կամ դոկտորական ատենախոսություններին՝ նախքան հրատարակվելը, առավել եւս՝ նախքան պաշտպանությունը: Բացառություն պետք է լինի երիտասարդ արվեստաբան Արսեն Թորոսյանի թեկնածուական ատենախոսությունը «19-րդ դարի երկրորդ կեսի եւ 20-րդ դարի առաջին տասնամյակի հայ երգիծանկարչությունը» թեմայով: Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ Արսեն Թորոսյանը ձեռնամուխ է եղել իսկապես բացառիկ մի թեմայի, որը մեր իրականության մեջ քիչ ուշադրության է արժանացել ցարդ: Բանասերներն ու մամուլի պատմության մասնագետները դրան անդրադարձել են մասնակի՝ մեր երգիծական թերթերի ու ժանրերի մասին գրելու ընթացքում: Այնինչ երգիծանկարչությունը կամ ծաղրանկարչությունը կայուն եւ հստակ ավանդներ է ունեցել հայ լրագրության մեջ եւ բազմաթիվ հեղինակություններ ենք ունեցել այդ ասպարեզում, որոնցից Ալեքսանդր Սարուխանը, Չիք Դամադյանը, Տիրան Աճեմյանը, Մասիս Արարատյանը եւ մի քանի ուրիշներ մեծ ճանաչում են գտել նաեւ միջազգային մամուլում:**

**Իր գիտական ղեկավար՝ արվեստաբան, բանաստեղծ ու պատմաբան պրոֆ. Լեւոն Չուքասզյանի ղեկավարությամբ Արսեն Թորոսյանը լուրջ ակնարկով ընդգրկել է նշված ժամանակահատվածում հայ երգիծանկարչության ու երգիծանքի պատմությունը, եվրոպական գաղթօջախներում ծնունդ առած հայկական երգիծանկարչության եւ դրա միջոցով Հայկական հարցի արտացոլման առանձնահատկությունները: Այնուհետեւ «Ազդակ», «Հնչակ» եւ այլ պարբերականների ուղեգրած քաղաքական-ազգային ուղղությունների համատեքստում գիտական քննության է ենթարկել երգիծանկարների թեմատիկ ընդգրկումները, զուգահեռաբար, որպես համեմատության եզր, անդրադառնալով արտասահմանյան մամուլում Հայկական հարցի երգիծանկարային դրսեւորումներին:**

**Հեղինակը կատարել է, բացի ժամանակագրական շրջանաբաժանումներից, հայ երգիծանկարչության աշխարհագրական բաժանումներ՝ Պոլիս, Թիֆլիս եւ այլ գաղթօջախներ, եւ առանձին-առանձին անդրադարձել է «Մեղու», «Մշակ», «Թատրոն», «Սափրիչ», «Կառափնաս», «Խարազան», «Խաթաբալա», «Հայելի» եւ այլ պարբերականներում լույս տեսած երգիծանկարներին, հեղինակներին, վեր հանել դրանց գծապատկերային, գրաֆիկական եւ մյուս առանձնահատկությունները, փորձ է արել ստեղծելու դրանց արվեստային ծագումնաբանությունը եւ համեմատել օտար արվեստակիցների աշխատանքների հետ:**

**Անշուշտ, աշխատությունն ունի թերություններ, որոնցից առաջին հերթին պետք է նշել շարադրանքի՝ տեղ-տեղ գլուխ ցցող անհարթությունները ու գիտական տերմինների անհարկի առատ գործածությունը: Այնուհանդերձ, կարծում եմ, որ աշխատության վերամշակումից ու լրամշակումից հետո հետագայում մենք կունենանք հայկական հարուստ երգիծանկարչությանը նվիրված հիմնարար առաջին գործը:**

**Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ**



# Լեւոն Թուխիկյանն այլեւս մեզ հետ չէ



**Հայ թատրոնի եւ կինոյի լեգենդներից մեկն էլ կնքեց իր մահկանացուն՝ մեր հիշողությանն ի պահ հանձնելով իր հրաշալի դերակատարումներն ու մարդկային ինքնատիպ նկարագիրը: Կյանքից հեռացավ «Նվագախմբի տղաների» Ցոլակ Դարբինյանը, Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան թատրոնի հիմնադիրներից ու երեւելի անհատականություններից մեկը, ով իր ստեղծագործությամբ եւ հայտնությամբ շարունակում էր մեր դերասանական արվեստի նշանավորների ավանդույթները:**

**Լեւոն Սիմոնի Թուխիկյանը ծնվել է Լենինականում, 1931 թ.: Շառավիղն էր մի մեծ ու շեն տոհմի, որի բնակավայրի հատկանիշներն էր պահում, կենցաղի ու մտածողության առանձնահատկությունները, որոնք հետագայում տեղ գտան նրա «Հեքիաթ, հեքիաթ պապս» եւ «Վերվարածները» վիպակներում: Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի Արմեն Գուլակյանի սանն ավարտում է նույն ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետն ու մինչեւ 1966 թ. աշխատում է Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում՝ միաժամանակ նկարահանվելով կինոյում: Նրա կինոդերերը. Սուրեն՝ «Ինչու է աղմկում գետը», Ռուբեն՝ «Վերջին նետում», Ցոլակ՝ «Նվագախմբի տղաները» մեծ ճանաչում բերեցին նրան՝ դասելով ազգային դերասանական դպրոցի երիտասարդ սերնդի լավագույն ներկայացուցիչների շարքին: Իսկ երբ Հրաչյա Ղափլանյանը հիմնադրեց դրամատիկական թատրոնը, Լեւոն Թուխիկյանը իր ստեղծագործական ճակատագիրը կապեց այդ թատրոնի հետ, ուր լիովին բացահայտվեցին նրա դերասանական բացառիկ կարողություններն ու գեղարվեստական հակումները... Լեւոն Թուխիկյանի Պարասովը՝ «Անօժիտ», Դոմենիկո Սորեանոն՝ «Ֆիլումենա Մարտուրանո», Ռիչարդը՝ «Ռիչարդ Երրորդ», Մամյանը՝ «Վերջին ուսուցիչը», Թափառնիկոսը՝ «Ատամնաբույժն արեւելյան», Մեք-Գրեգորը՝ «Իմ սիրտը լեռներում է», Մոսին՝ «Անուշ», մեկընդմիշտ իրենց տեղն են հաստատել 20-րդ դարավերջի ազգային թատրոնի պատմության մեջ:**

**Լեւոն Թուխիկյանը խորապես ազգային դերասան էր, ով կարողանում էր միանգամայն նոր ու ինքնատիպ արտահայտչաձեւերով հասնել ազգային տիպական բնավորության մատուցմանը, բեմատիպարների մտային եւ հուզական պլանների ներդաշնակմանն ու ցայտուն արտացոլմանը: Մեծ ուժ եւ ներքին մեծ պաթոս էին կրում նրա հերոսները, որոնք ունեին որոշակի ռոմանտիկականություն, հզոր տեմպերամենտ: Անմոռանալի են հայկական հեռուստաթատրոնում ստեղծված Մազութի Համոն («Երկիր Նաիրի») եւ Բագրատյանը («Մուսա լեռան քառասուն օրը»):**

**Լեւոն Թուխիկյանը նաեւ բեմադրիչ էր, գրող ու թատերագիր: Նրա «Կանաչ տտվեր» պիեսը սեփական բեմադրությամբ ներկայացվել է Հ. Ղափլանյանի անվան եւ Գյումրու Վ. Աճեմյանի անվան թատրոններում: Տպագրել է «Երեք դիմակ» պիեսը, վեպի եւ վիպակների երկու գիրք:**

**Լեւոն Թուխիկյանի վաստակն ու ծառայությունները բարձր են գնահատվել ու նա արժանացել է ՀՍՍՀ վաստակավոր, ՀՍՍՀ ժողովրդական արտիստի պատվավոր կոչումների: Նրան շնորհվել էր նաեւ ՀՍՍՀ պետական մրցանակ:**

***Լեւոն Թուխիկյանի մահվան կապակցությամբ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով: Հանձնաժողովը տեղեկացնում է, որ Լ. Թուխիկյանի հոգեհանգիստը տեղի կունենա հուլիսի 10-ին, ժամը 18-ին՝ Իսրայելյան 37, բն. 27 հասցեում, վերջին հրաժեշտի արարողությունը՝ հուլիսի 11-ին, ժամը 12-14-ը՝ Հրաչյա Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում: Հուղարկավորությունը՝ Երեւանի քաղաքային պանթեոնում:***

# Գնահատանք «Սպարտակ» բալետի կազմակերպիչներին

**Հուլիսի 9-ին, ժամը 19:00-ին Օպերայի եւ բալետի ազգային-ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ «Սպարտակ» բալետի կազմակերպիչների, մասնակիցների եւ աջակիցների հանդիպումը, որի ընթացքում ՀՀ մշակույթի նախարարության կողմից հանձնվեցին շնորհակալագրեր՝ բալետի բեմականացմանը մասնակցած եւ օժանդակություն ցուցաբերած անձանց եւ կազմակերպություններին (օպերային թատրոնի անձնակազմ, «Բարեկամություն» համույթ, հովանավորներ, ինֆորմացիոն աջակիցներ, «Արտ Թիմ» եւ այլն):**

**Հանդիպման ընթացքում առաջին անգամ ցուցադրվեց նախագծի մաս կազմող՝ «Շարմ Հոլդինգ» ընկերության արտադրության «Սպարտակ» վավերագրական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Սոնա Ալեքսանյան, ռեժիսոր՝ Գարիկ Մաշկարյան), որը պատմում է բալետի հայաստանյան բեմականացման նախապատմության, աշխատանքային գործընթացի եւ պրեմիերայի մասին: Նշենք, որ նախագծի գլխավոր հովանավորն է «Վիվասել ՄՏՍ»-ը:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Եգիպտահայ թատրոնի պատմությունից

Օգտվելով նախկին եգիպտահայ Հովհաննես Ոսկերիչյանի Մոնրեալում գտնվելու առիթից Դավիթ Էվերեկլյանը հարցազրույց է ունեցել նրա հետ եգիպտահայ թատրոնի պատմության վերաբերյալ: Հարցազրույցից, որը տպագրվել է «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի հունիսի 8-ի համարում, քաղում ենք հետեւյալ տեղեկությունները:

Եգիպտահայ թատրոնը շատ բեղմնավոր մի ժամանակաշրջան է ապրել անցյալ դարի 30-60-ական թվականներին, որի մասին դժբախտաբար չկա արժեքավոր մի հրատարակված հատոր: Այնտեղ գործել են Վահրամ Փափազյանը, Հովհաննես Զարիֆյանը, Մանվել Մարությանը, Սիրանույշը, Արաքսի Օհանյանը, Խաչիկ Սանդալճյանը, Արփիար Վարդանյանը, Կարապետ Կարապետյանը, Վահե եւ Այծեմնիկ Պոյաճյանները, Խորեն Տետեյանը եւ շատ ուրիշներ: Բեմադրվել են «Գիքորը», «Թշվառները», «Շողոքորթը», «Ստվերում», «Որբուհին», «Ես միտքս փոխեցի», «Կորրադո», «Կարամազով եղբայրներ», «Չար ոգի», «Արթին Աղա», «Ծառերը կանգուն կմահանան» եւ այլ պիեսներ:

Ո՞վ է այս բոլորը մոռացությունից փրկելու:

**Հ. Ծ.**

AZG NEW 7.QXD 7/9/2009 10:32 PM Page 1





# Նման խաղով դժվար էր հաջողություն ակնկալել

Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան խաղում «Միկայի» առջեւ դժվարին խնդիր էր ծառացած: «Հելսինգբորգի» հետ սեփական հարկի տակ երեկ անցկացված խաղում մեր ֆուտբոլիստները պետք է ձգտեին ոչ միայն 2 գոլ խփել, այլեւ անառիկ պահել սեփական դարպասը՝ հաջորդ փուլի ուղեգրի նվաճման համար: Դրա համար նախ անհրաժեշտ էր չափազանց ուշադիր գործել պաշտպանությունում, իսկ առջեւի գծում մեծ ակտիվություն դրսեւորել, արագ գրոհային գործողությունների շնորհիվ ճեղքել մրցակցի պաշտպանական պատնեշը եւ ամենակարեւորը՝ դիպուկ գտնվել գրոհների եզրափակիչ փուլում:



Նախորդ խաղի համեմատ «Հելսինգբորգի» մեկնարկային կազմում 5 փոփոխություն էր կատարվել: Ընդ որում թիմի առաջատարներ Հենրիկ Լարսոնն ու Էրիկ Սունդինը, որոնք գոլերի հեղինակներ էին դարձել Շվեդիայում, Երեւան չէին ժամանել: Ինչ խոսք, դա կարող էր ազդել հյուրերի հարձակողական ներուժի վրա:

Ինչպես եւ սպասվում էր, «Միկան» ակտիվ գործողություններով սկսեց հանդիպումը: Սակայն ցավոք մեկնարկային ակտիվությունը շատ կարճ տեւեց: Այդ ընթացքում երկու անգամ Ուլիսես Մոնտենեգրոն փորձեց գրավել դարպասը, սակայն դարպասապահը հետ մղեց հարվածները: «Միկան» գործում էր դանդաղ, գրոհները կազմակերպում էր փոքր ուժերով, ուստի դժվար էր նման խաղով սպառնալ մրցակցի դարպասին: Բացի այդ էլ, ֆուտբոլիստները հաճախակի էին շարաշահում անհատական խաղը: Գոլային միակ իրական պահը դաշտի տերերը ստեղծեցին 24-րդ րոպեին, երբ դարպասապահի դեմ մենմենակ հայտնվեց Արմեն Պետրոսյանը, սակայն վերջինս անփույթ խաղաց եւ չկարողացավ գրավել դարպասը:

Զգալով, որ «Միկայի» գրոհներն առանձնակի վտանգ չեն ներկայացնում, հյուրերը բավական աշխուժացան, որի արդյունքում մի քանի վտանգավոր պահեր ստեղծեցին: Իսկ 68-րդ րոպեին օգտվելով «Միկայի» պաշտպանների անփութությունից, Ռենե Մակոնդելեն գրավեց դարպասը: Այդ գոլը փաստորեն վերջնականապես վճռեց հաջորդ փուլի ուղեգրի հարցը: Ճիշտ է, խաղավերջում Էդնեյը 11 մ հարվածով վերականգնեց հավասարակշռությունը, սակայն դա միայն փոքր սփոփանք էր:

«Միկան» չկարողացավ լուծել իր առջեւ դրված խնդիրը եւ դուրս մնաց հետագա պայքարից: Ցավալին այն է, որ հանձինս «Հելսինգբորգի»՝ «Միկան» եվրոպական միջին մակարդակի թիմի հետ գործ ուներ եւ իր լավագույն որակները դրսեւորելու դեպքում կարող էր հաջողությամբ հաղթահարել շվեդական արգելապատնեշը: Բայց առայժմ Եվրոգավաթներում հայկական ակումբները կաշկանդված են գործում, չեն կարողանում ինչպես հարկն է դրսեւորել իրենց, աչքի ընկնել կամային հատկանիշներով ու մարտական բնավորությամբ: Իսկ առանց նման հատկանիշների դրսեւորման միջազգային մրցասպարեզներում հաջողություն ակնկալելն անհնար է: Երեկվա հանդիպումը եւս մեկ անգամ հաստատեց դա:

# Շարապովայի տարեկան եկամուտը 22 մլն դոլար է



Ամերիկյան «Ֆորբս» ամսագրի հրապարակած տվյալներով ռուսաստանցի թենիսիստուհի Մարիա Շարապովան մինչեւ 30 տարեկան «աստղերի» ցուցակում 22 մլն դոլար տարեկան վաստակով զբաղեցնում է 11-րդ տեղը: Ամսագիրը հաշվի է առել 2008-ի հունիսից մինչեւ 2009-ի հունիսը երիտասարդ անվանի անձնավորությունների տարեկան եկամուտը: Դրա մեջ մտնում են ոչ միայն պարգեւավճարներն ու աշխատավարձը, այլեւ զանազան գովազդային պայմանագրերից ստացված եկամուտները:

Ցուցակը գլխավորում է ամերիկացի երգչուհի Բեյոնսեն, որի եկամուտը կազմել է 87 մլն դոլար: 2-րդ տեղում «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցարշավորդ Կիմի Ռայկոնենն է (45 մլն): Լավագույն եռյակը եզրափակում է բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսը (40 մլն): Չորրորդ հորիզոնականում ամերիկացի երգչուհի Բրիտնի Սփիրսն է (35 մլն), իսկ 5-րդ տեղը 33 մլն-ով զբաղեցնում է թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը:

# Մայքլ Օուենն ընդունեց Ֆերգյուսոնի հրավերը

«Մանչեսթր Յունայթեդը» երկամյա պայմանագիր է կնքել «Նյուքասլի» հարձակվող Մայքլ Օուենի հետ: Վերջինիս պայմանագրի ժամկետն ավարտվել էր եւ նա ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ էր ստացել: Օուենին թիմ է հրավիրել «Մանչեսթր Յունայթեդի» գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը: Նա զանգահարել էր ֆուտբոլիստին եւ հրավիրել տուն, որտեղ էլ առաջարկել էր խաղալ իր թիմում: Օուենն անմիջապես համաձայնել էր:

Դժվար թե թիմի կազմն ուժեղացնելու առումով Օուենի ձեռքբերումը կնպաստի դրան: Սակայն նա կարող է զգալի եկամուտ ապահովել ակումբին: Չնայած վերջին տարիներին վնասվածքների պատճառով Օուենի խաղն անկում է ապրել, սակայն նախկինի պես նա ֆուտբոլասերների շրջանում մեծ հեղինակություն է վայելում՝ այս առումով թերեւս զիջելով միայն Դեւիդ Բեքհեմին: Անցած առաջնությունում Օուենը «Նյուքասլի» կազմում ընդամենը 10 գոլ խփեց:

«Մանչեսթր Յունայթեդի» ուշադրության կենտրոնում է նաեւ «Այաքսից» «Ռեալ» տեղափոխված հոլանդացի հարձակվող Կլաս Յան Հունտելարը: Վերջինովս հետաքրքրվում է իտալական «Միլանը», որը 18 մլն եվրո է առաջարկել «Ռեալին» վարձավճարով ֆուտբոլիստին վերցնելու համար: Սակայն «Ռեալը», որ 27 մլն եվրո էր վճարել նրա համար, ցանկանում է գումարի մեծ մասը հետ վերադարձնել եւ համաձայն է 20 մլն եվրոյից ոչ պակաս գումարով «Միլանին» տրամադրել Հունտելարին:

Ֆերգյուսոնի ուշադրության կենտրոնում է հայտնվել «Էվերտոնի» երիտասարդ ֆուտբոլիստ Ջեկ Ռոդուելը, որն Անգլիայի երիտասարդական հավաքականի կազմում արժանացել էր Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսին: «Մանչեսթր Յունայթեդը» մտադիր է Ռոդուելի հետ փոխանակել թիմի վետերաններից մեկին՝ Պոլ Սկոուլզին:

# Զիջեցին իրանցիներին

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 16 տարեկանների պատանեկան հավաքականը «Փյունիկի» մարզադպրոցում ընկերական մրցախաղում 1-3 հաշվով զիջեց Իրանի իր հասակակիցներին: Հաշիվը բացեցին հայ ֆուտբոլիստները Ղուկաս Պողոսյանի հարվածի շնորհիվ: Սակայն հետագայում ՀՀ հավաքականը 3 գոլ բաց թողեց ու պարտվեց: Այսօր նույն մարզադաշտում կկայանա մրցակիցների 2-րդ հանդիպումը:

# Գերետսը «Զենիթում» ավելի կվաստակի

Բելգիացի մասնագետ Էրիկ Գերետսը «Զենիթի» գլխավոր մարզչի պաշտոնի հիմնական հավակնորդն է: Ինչպես հայտնի է, «Զենիթի» ներկայիս մարզիչ, հոլանդացի Դիկ Ադվոկատը հունվարի 1-ից ստանձնելու է Բելգիայի ազգային հավաքականի ղեկը:

Եթե բանակցությունները հաջող ավարտվեն, ապա Գերետսը Ռուսաստանում ավելին կստանա, քան ներկայում նա վաստակում է Սաուդյան Արաբիայում: «Ալ Խիլյալ» թիմում նրա տարեկան աշխատավարձը 2 մլն եվրո է: Արաբական ակումբը ներկայումս ֆինանսական դժվարություններ ունի հովանավորի հետ պայմանագրի խզման պատճառով, որը 15 մլն եվրո էր հասկացնում յուրաքանչյուր մրցաշրջանում:

## ՇԱԽՄԱՏ

# Անդրեասյանը զիջեց առաջատարի դիրքը

Իտալական Բենասկե քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում ուշադրության կենտրոնում էին առաջատարների մասնակցությամբ հանդիպումները: Զավեն Անդրեասյանը սպիտակներով հաշտություն կնքեց ադրբեջանցի Նիջաթ Մամեդովի հետ ու վաստակեց 6 միավոր: Առաջատարներից երկուսը՝ Վիկտոր Լազնիչկան եւ Ռոման Էդուարդսը հաղթեցին, որի շնորհիվ 6,5 միավորով գլխավորեցին աղյուսակը: Լազնիչկան պարտության մատնեց Լայթհայմին, Էդուարդսն առավելության հասավ Բուրմակինի նկատմամբ:

Առաջատարներին ընդհուպ մոտեցավ Հրանտ Մելքումյանը՝ հաղթանակի հասնելով Պետեր Միխալիկի հետ պարտիայում: Դրա շնորհիվ նա վաստակեց 6 միավոր եւ այժմ Զավեն Անդրեասյանի ու մի խումբ շախմատիստների հետ բաժանում է 3-10-րդ տեղերը: Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ Կարեն Մովսիսյանը ոչ-ոքի ավարտեց մրցախաղը Մարիո Գոմեսի հետ եւ վաստակեց 5,5 միավոր:



Մրցաշարի ավարտին մնացել է 4 տուր: 8-րդ տուրում Անդրեասյանը սպիտակներով կմրցի սերբ Միլոշ Պավլովիչի հետ: Մելքումյանի մրցակիցը կլինի լիտվացի Սարունաս Շուլսկիսը, իսկ Մովսիսյանն ուժերը կչափի չեխ Վլաստիմիլ Յանսայի հետ:

# Խաղաղ տուր

Մեկօրյա հանգստից հետո Դորտմունդում սկսվեց շախմատի մրցաշարի 2-րդ շրջանը: 6-րդ տուրի երեք պարտիաներն էլ խաղաղ ելք ունեցան, որի պատճառով մրցաշարային աղյուսակում շախմատիստները պահպանեցին իրենց դիրքերը: Հաշտություն կնքեցին Յակովենկոն ու Կառլսենը, Կրամնիկն ու Լեկոն, Բաքրոն եւ Նայդիչը:

6 տուրից հետո աղյուսակը 4 միավորով շարունակում է գլխավորել Մագնուս Կառլսենը: 3,5-ական միավոր ունեն Վլադիմիր Կրամնիկն ու Պետեր Լեկոն: Դմիտրի Յակովենկոյի օգտին գրանցված է 3 միավոր, Բաքրոն նրանից հետ է մնում կես միավորով: Աղյուսակը 1,5 միավորով եզրափակում է Արկադի Նայդիչը:

# Կրկին ոչ-ոքի

Սան-Սեբաստիանի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում էլ Սերգեյ Մովսիսյանը ոչ-ոքի խաղաց: Այս անգամ նրա մրցակիցը Ֆրանցիսկո Վալյեխոն էր: Հաշտություն կնքեցին նաեւ Կասիմջանովն ու Սվիդլերը, Կարպովն ու Պոնոմարյովը:

Իր 2-րդ հաղթանակը տոնեց ճապոնացի Հիկարու Նակամուրան՝ պարտության մատնելով Մաքսիմ Վաշյե-Լագրավին: Նակամուրան 2 միավորով միանձնյա առաջատարն է, որից կես միավոր է հետ մնում Վալյեխոն: Մովսիսյանը, Վաշյե-Լագրավը, Սվիդլերը, Պոնոմարյովն ու Գրանդան ունեն մեկական միավոր: Վերջինս պարտության մատնեց Սան Սեգունդոյին, որը Կարպովի եւ Կասիմջանովի հետ կես միավորով եզրափակում է աղյուսակը:

# Առայժմ միայն մեկ մեդալ

Բելգրադում ընթացող համաշխարհային ամառային Ունիվերսիադայում ձյուդոյի մրցաշարում մինչեւ 90 կգ քաշային Հակոբ Առաքելյանն առաջին գոտեմարտում զիջել է կորեացի Վոն Լե Կուին: Հաջորդ գոտեմարտում նա հաղթել է չեխ Լուկաս Ռակին, իսկ 3-րդում պարտվել է մոլդովացի Իվան Ռեմարենկոյին:

Մինչեւ 73 կգ քաշային կարգում Ռոբերտ Վարդանյանը 1/32 եզրափակիչում պարտության մատնեց եգիպտացի Իսմայիլ Հաֆեզ Հուսեյնին: Հաջորդ փուլում հայ ձյուդոիստին չհաջողվեց շարունակել հաղթարշավը՝ պարտվելով իսպանացի Պաբլո Սանչեսին:

Կանանց մրցաշարում Հայաստանի միակ ներկայացուցիչ Անուշ Հակոբյանը հաջող ելույթ ունեցավ՝ շահելով առաջին գոտեմարտը: Նրա մրցակցուհին Լուսիե Շիտրան էր:

Հիշեցնենք, որ Հայաստանի մարզիկները Բելգրադում առայժմ միայն մեկ բրոնզե մեդալ են նվաճել, որը բաժին է հասել թեքվոնդոյիստ Արման Երեմյանին: Բոլորից հաջող հանդես են գալիս Չինաստանի ներկայացուցիչները, որոնք նվաճել են 39 մեդալ (13 ոսկե, 16 արծաթե, 10 բրոնզե): Մեկ մեդալ պակաս ունեն ճապոնացիները (9+11+18): 3-րդ տեղում ռուս մարզիկներն են, որոնք նվաճել են 31 մեդալ (7+12+12):

# Լեմյեն վճռել է ավարտել ելույթները

Հոկեյի ազգային լիգայի «Սան Խոսե» թիմի 44-ամյա հոկեյիստ Կլոդ Լեմյեն որոշել է ավարտել կարիերան: Նա ազգային լիգայի պատմության մեջ ամենահաջողակ հոկեյիստներից մեկն է, որը 4 անգամ նվաճել է Սթենլիի գավաթը: Ընդ որում Լեմյեն այն 8 հոկեյիստներից մեկն է, որը պատվավոր մրցանակին է արժանացել երեք թիմում (1986-ին՝ «Մոնրեալում», 1995-ին եւ 2001-ին՝ «Նյու Ջերսիում», 1996-ին՝ «Կոլորադոյում»):

Ընդհանուր առմամբ «Մոնրեալի», «Նյու Ջերսիի», «Կոլորադոյի», «Ֆինիքսի», «Դալասի» եւ «Սան Խոսեի» կազմերում Լեմյեն ազգային լիգայի առաջնություններում 1215 խաղ է անցկացրել, վաստակել է 786 միավոր (379 գոլ, 407 գոլային փոխանցում): 58 անգամ նա դարձել է թիմի հաղթական գոլի հեղինակ, 1777 րոպե տուգանվել է:

Սթենլիի գավաթի խաղարկություններում անցկացրած խաղերի քանակով (234) նա հինգերորդ տեղն է զբաղեցնում Կրիս Չելիոսից, Պատրիկ Ռուայից, Նիկլաս Լիդստրյոմից եւ Մարկ Մեսյեից հետո: Իսկ խփած գոլերով (80) միայն երկուսով է զիջում Մորիս Ռիշարի լավագույն արդյունքին: 1995-ին «Նյու Ջերսիի» կազմում նա ճանաչվել է Սթենլիի գավաթի ամենաարժանավոր հոկեյիստը:

«Շնորհակալ եմ իմ նախկին թիմակիցներին, որոնց հետ խաղացել եմ ողջ կարիերայիս ընթացքում: Իմ բախտը բերել է, որ կարիերաս այսպես դասավորվեց: Շատ անվանի հոկեյիստներ հնարավորություն չեն ունեցել նվաճել այն ամենը, ինչ ես», նշել է Կլոդ Լեմյեն:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW 8.QXD 7/9/2009 11:05 PM Page 1



# Անձնակազմ

Օրեր տեւած անհողմությունից հետո երկինքը մեզ քամի ուղարկեց: Անշուշտ, դա ուրախալի է: Երկու-երեք հանգույցի փոխարեն շարժվում ենք արդեն յոթ-ութ հանգույց արագությամբ: Քամու ուղղությունը, սակայն, մերթ ընդ մերթ փոխվում է: Հարկավոր է գլուխ հանել եւ արագորեն ճիշտ կարգադրություններ անել անձնակազմին: Նավապետը պարտավոր է զբաղվել դրանով եւ իր ձայնը լսելի դարձնել քամու ոռնոցի պայմաններում: Իսկ տղաները պարտավոր են ոչ միայն ճիշտ հասկանալ նավապետին, այլեւ ճշգրտորեն կատարել նրա պահանջները: Հիրավի մրջնային կամ մեղվային աշխատանք է:

Նույնիսկ եթե քամու ուղղությունը 24 ժամ մնա անփոփոխ, դարձյալ անձնակազմի 7 անդամները պետք է պահպանեն կարգուկանոնը: Հերթապահը պետք է մնա իր տեղում, իսկ փոխարինողները պետք է քնեն: Հարկավոր է օրական երեք անգամ ուտել: Անձամբ ես պարտավոր եմ ռեպորտաժներ գրելու համար զանգահարել գրեթե բոլոր մայր ցամաքներ: Արիկը պետք է սքանավորի իմ գրածը եւ իմ ուղղումներից հետո համակարգչով ուղարկի ուր որ հարկն է:

Անձնակազմի մյուս անդամները գրառումներ չեն անում, մինչդեռ մարդկային հիշողությունը հազվադեպ է պահպանում դեպքերի բոլոր մանրամասնությունները: Նրանք երեւի կհիշեն, որ երկարատեւ ընդմիջումից հետո նավապետը որսաց մի մեծ ձուկ, որը ոչ ոք չկարողացավ դասակարգել: Կհիշեն, թե ինչպես մի թռչող ձկնիկ փորձեց ցատկել մեր նավի վրայով, բայց ընկավ իջեցված մեծ առագաստի վրա: Իսկ ժպտադեմ Վահագնը վերցրեց ձկնիկին եւ նետեց օվկիանոսի մեջ:

Ուզում եմ կրկին անդրադառնալ անձնակազմի անդամներին, որոնք շատ լուրջ են վերաբերվում իրենց աշխատանքին: Իսկ լրջությունն այն է, որ նրանք այս նավարկության հենց սկզբից հասկացել են «Կիլիկիայի» եւ «Արմենիայի», ինչպես նաեւ նավարկության բուն պրոցեսների հսկայական տարբերությունը: Դա իր հերթին ենթադրում է վերաուսուցում:

Նավապետ **Սամվել Կարապետյանը** իր սկզբունքները չի բարձրաձայնում: Ենթադրենք, ծագել է ֆորսմաժորային իրավիճակ:



Նա արդեն գիտի, եթե այն համարենք անլուծելի, ապա կմնա միայն նետվել ջուրը եւ խեղդվել: Հարկավոր է խնդիրը լուծել եւ իրավիճակից դուրս գալ գործողությամբ: Օրինակները շատ-շատ են. դույլեր «Կիլիկիայի» ջարդված ղեկաթիերի փոխարեն, մի քանի օրում շարժիչի «սեփական» կոլեկտորի ստեղծում, որի միջոցով արդեն հնարավոր է կառանվել նավահանգիստներում եւ այլն: Ահա այդպիսին է մեր նավապետը: Հինգ տարի առաջ, երբ ես նոր-նոր սկսել էի երազել հայկական շուրջերկրյա նավարկության մասին, «Արմենիայի» նավապետի տեղում տեսնում էի միմիայն Սամվել Կարապետյանին:

**Արմեն Նազարյանը** տիտան է արդեն իսկ այն պատճառով, որ նավարկության նախապատրաստման վերջին երեք տարիներին ամեն



օր համբերությամբ դիմացել է իմ անտանելի բնավորությանը: Խորամանկ է եւ գործնական: Նույնիսկ իմ հնարավոր նյարդային պոռթկումներում կարողանում է ինչ-որ օգտակար բան գտնել մեր ընդհանուր գործի համար: Մեր մարտերը հիմա շարունակվում են նավի վրա: Ես նրան ստիպում եմ մի քանի անգամ փոփոխել ռեպորտաժների տեքստերը, իսկ նա, համակարգչում փոփոխություններ կատարելով, գտնում է, որ այդ գործով պետք է զբաղվեն խմբագիրները: Իսկ ես ասում եմ. «Գրողը պետք է հարգի խմբագրին»: Հայաստանի նախագահը եւ վարչապետը պետք է իմանան, որ նույնիսկ փոքրիկ պահին Արիկը զբաղվում է, ես կասեի, զուտ պետական գործով:

Ոչ առանց ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանի օգնությամբ մենք հասանք այն բանին, որ «Արմենիան» այսօր գրանցված է կապի միջազգային ծովային արբանյակային համակարգում եւ դուրս է գալիս Հայաստանի պետական դրոշով: Իսկ դա, ի թիվս այլ բաների, նշանակում է, որ ծովերի եւ օվկիանոսների որեւէ կետում մենք ծովային փրկության ծառայության տեսադաշտում ենք: Մեզ հավաստացին եւ բացառության կարգով ձեւակերպեցին համապատասխան փաստաթղթերը: Բայց նախարարը միաժամանակ ինձ խնդրեց կազմել օրինագիծ, ըստ որի Հայաստանը կդառնա Ծովային միջազգային կազմակերպության անդամ: Ամբողջ հետխորհրդային տարածքում միայն մենք ենք մնացել «չվավերացված»: Մինչդեռ կառուցում ենք դեպի հարավ տանող երկաթուղի, եւ մեր բեռներն անցնելու են նաեւ օվկիանոսով: Ահա թե ինչպիսին է մեր նավապետի ավագ օգնականը, որը նաեւ մեր գլխավոր կապավորն է:

**Հայկ Բաղդալյան -** Ամեն անգամ, մանավանդ խնջույքների ժամանակ, ես նրան ներկայացնում եմ որպես տասնամարտիկի: Եվ



ահա իմ նավախցում, հսկայական գիտարշավային գրադարանի ֆոնի վրա Հայկին հարցնում եմ. «Հասկանում եմ, բաժակաճառի ժանրը թույլ է տալիս կամայականություններ: Բայց դու ինքդ ինչ-որ անհամարություն չե՞ս զգում, երբ քեզ անվանում եմ տասնամարտիկ եւ ընդսմին թվարկում միայն օպերատորի, մոտորիստի եւ էլեկտրիկի մասնագիտությունները»: Նա լայն ժպտաց եւ հանգիստ ասաց. «Իսկ ես կարծում էի, թե դուք գիտեք իմ բոլոր տասը մասնագիտությունների մասին եւ ժամանակի խնայողության համար եք թվարկում միայն երեքը»: Եվ նա սկսեց մասների վրա հաշվել: Չորրորդ մասնագիտությունը խոհարարությունն է. նա հմտորեն պատրաստում է մի քանի ճաշատեսակ: Հինգերորդը լուսանկարչությունն է. Հայկը երազում է բացել լուսանկարչական ցուցահանդես: Վեցերորդը առագաստանավորդի մասնագիտությունն է. «Կիլիկիան» նրան դարձրեց սպորտի վարպետ: Յոթերորդը հյուսնի, կարմրափայտագործի մասնագիտությունն է: Ութերորդն այն է, որ Հայկը կարող է քանդել, հավաքել, նորոգել կապի բոլոր արդիական, ներառյալ թվային, միջոցները: Իններորդ մասնագիտությունը բնակարանների նորոգումն է, ներկարարությունը, շինարարությունը: Տասներորդը ավտոմեքենաների եւ դրանց շարժիչների նորոգումն է:

**Սամվել Սարգսյան -** Նավի խոհարար:



Ուզում եմ դիմել նրա որդի Դավթին, որն իր գրեթե երկու մետրանոց հասակով բասկետբոլ խաղալու փոխարեն շեփոր է նվագում: Ուզում եմ նրան ասել, որ իր հայրն ավելին է, քան նավի խոհարարը: Սամվելը նավաստի է, բայց առաջին հերթին՝ հիանալի քարտեզագիր: Նրա որդի Դավիթը նույնպես հիանալի քարտեզագիր է եւ իմ խնդրանքով չափել է «Կիլիկիայի» եւ «Արմենիայի» ամբողջ երթուղիները: Բայց հայրը նաեւ ծովային տերմինաբանության պրոֆեսոր է, որի ժամացույցը նշում է միայն Գրինվիչի ժամը: Ծովային աշխատանքից ազատ պահերին նա զբաղվում է անձնակազմի սննդի հարցով: Հուլիսի 1-ին խոհարարը հայտարարեց, որ հինգ լիտրանոց բալոնների խմելու ջուրը սպառվել է, այսուհետեւ անձնակազմը պետք է խմի նավի բաքի ջուրը, այն էլ՝ տեւական եռացումից հետո:

**Մուշեղ Բարսեղյան եւ Վահագն Մաթեւոսյան -** Սեւանցի այդ երիտասարդները եկող տարի կավարտեն ֆիզիկական կուլ-





տուրայի եւ սպորտի պետհամալսարանը: Դիպլոմային աշխատանքը կգրեն, իհարկե, «Արմենիայի» վրա, Հորն հրվանդանի մոտակայքում: Իսկ հետո՞: Նրանք ծնվել են ծովերում եւ օվկիանոսներում նավարկելու համար: Այդ երկուսին գործի բերմամբ ճանաչողները կասեն, որ նավարկության ընթացքում առանց նրանց շատ բաներ անհնար կլինեին: Երկուսն էլ ծովային հուսալիություն են, առագաստանավությունն ուսումնասիրել են բազմապատկման աղյուսակի պես: Արդեն այժմ պետք է մտածել նրանց ապագայի մասին, քանի որ նրանք պրոֆեսիոնալներ են միայն առագաստների կառավարման գործում:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**

Երեւանի ապրանքահումքային բորսայի հարթակում իրականացվելու է «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող գծամալուխային շինությունների (ЛКС) աճուրդային վաճառք:

Գծամալուխային շինությունները իրենց մեջ ներառում են՝ տարբեր տեսակի մալուխներ եւ լարեր, հենասյուներ, բաշխիչ արկղեր եւ այլն:

| N | Վաճառվող լոտերում ներառված որոշ մալուխների մակնիշներ |
|---|---|
| 1 | Կաբել TPP(10x2x0.4 600x2x0.4) |
| 2 | Կաբել PEJ (20x0.4 600x0.4) |
| 3 | Կաբել F8 (10x0.4 100x0.4) |
| 4 | Կաբել PED (100x0.4 400x0.4) |
| 5 | Կաբել MKSA |
| 6 | Կաբել MKSB |
| 7 | Կաբել MKSG |

Առաջին աճուրդը կկայանա ս.թ. հուլիսի 14-ին, ժամը 11.00-ին, իսկ հաջորդ աճուրդները կիրականացվեն յուրաքանչյուր աշխ. օր, ժ.11.00-17.00, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում:

Աճուրդներին մասնակցելու համար ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ պետ.գրանցման փաստաթղթերը, կնիքը կամ համապատասխան լիազորագիրը:

Ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել բորսա, զանգահարել (37410) 565228 կամ նամակագրել ycre@intertel.am.

## Վաճառվում է

ավտոլվացման բիզնես 60 քմ եւ նկուղային՝ 50 քմ տարածքով, ընդհանուրը՝ 110 քմ: Տարածքը կարելի է օգտագործել տարբեր բիզնեսի համար: Հասցեն՝ Ավետիսյան 67/6 (Ավետիսյան-Փափազյան խաչմերուկի հարեւանությամբ): ***Հեռ.՝ (091) 21 88 72:***

## Տրվում է վարձով

2 սեն. բնակարան՝ Զեյթունի շուկայի եւ Yerevan City սուպերմարկետի հարեւանությամբ. կիսակահավորված, լավ վիճակում, ունի բաց եւ փակ պատշգամբներ:

***Հեռ. 098 82-25-48***

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 09.07.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 364.54 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 508.82 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.44 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 219.31 |

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 9.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: